

ՀԵՆՐԻԿ ԹՈՒՍԱՆՅԱՆ

ԱՇՏԱՐԱԿ



ՀԱՅԴԵՏԿՐԱՏ

894.99 | 13445

p-88 | P. n. l. m. y. u. d. 3.

Uz y. u. p. u. k. 3 m.

17/12 | 27 1/2 | 211

ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆՅԱՆ

. 1

891.99

Բ- 88

ԱՏՈՒԳՎՈՄ Է 1961 թ.

Ա Շ Տ Ա Ր Ա Կ

A ¹¹ / 2803 / 13445.



ԵՐԵՎԱՆ

Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Տ

1948

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ԲՆԱԿԱՆԱԿ

Հ. Գ. ԲՆԱԿԱՆԱԿ

ԳԵՆՐԻԿ ԿՒՄԱՆՅԱՆ

„ԱՄՏԱՐԱԿ“

(Ու Արմանսկօմ լազկե)
Արմգիզ, Երեւան, 1948 ց.

ԻՄ ԵՐԳԻ ԱԿՈՒՆՔ

Ուրքան էլ հեռու լինեմ ես քեզնից,
Սե ամպով պատած սարերի ետե,
Սիրտս կարթնանա քո անուշ ձենից,
Ինձ մանուկ կզգամ, անհոգ ու թեթև:

Կթռչեմ դեպի գիրկդ կենսավեա,
Յաստախ կկանչեն շուրթերս պապակ,
Կապրեմ քո շնչում, հավիտյան քեզ հետ,—
Իմ երգի՛ ահուհք, իմ մայր Աշտարակ:

1945

ՀԱՂԹԱՆԱԿԻ ՈՌԻՆ

ԼԵՆԻՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մըրիկներում այս անհղ քո ոգին է սալառնում,
Տիտանական իր ուժով մեղ հաղթության է տանում,
Կո վեհ ոգին, որ հիմա դարձած ահուհնքն արևի,
Տիեզերքն է պարփակել և անհունները ծովի,—
Ո՛ւժ է տալիս մեր բաղկին, լո՛ւյս է տալիս անսպառ,
Հաղթանակի հո՛ւյս, հավատ՝ բանակներին զինավառ:

Կարիճ որդին հայրենյաց կովի դաշտը դնալիս,
Հայացքն անհղ, ցամամբ լի՝ քո սուրբ անունն է տալիս,
Որ մարտերում շառաչող նրա սուրբ չրեկվի,
Մեխվի սրտում թշնամու, վիշապն արնում թաթախվի,
Ծաղկի հողը հայրենի գարնան շնչով բարերեր,
Որի գալուցան են օրհնում մայր ու մանուկ անհամբեր:

Ազատարար կրեմլից հաղթանակի հավատքով
Ձորավարն է իմաստուն այցի գալիս քեզ՝ մտքով—
Իր սուրբ երգման կատարմամբ՝ տված երկրի անունից,
Որ ելել են ծովերը ու փոթորկվել են նորից,
Բայց քո նալն է անխորտակ հեռուները սլանում,
Հաղթանակի լուսաշող պայծառ ափերը տանում:

Լենին, դու մեր հաղթանակ, դու մեր կյանքի առավոտ,
Դո՛ւ առաջին ջահակիր, դու մեր սիրո ծով կարոտ,
Դո՛ւ, որ մանկանն էս սիրել ամեն ինչից առավել,
Դո՛ւ, որ նրան աշխարհի ողջ բարիքներն էս տվել,

Հսո՞ւմ ես, արդ, մանուկն է դեռ նոր լեզու առնելիս
Կյանքի շողը աչքերում քո սուրբ անունը տալիս:

Ե՛կ, տես, ինչպես սրբապիղծ վանդալները արնախում
Հարազատ մոր աչքի դեմ անմեղ մանկանն են կախում,
Խեղդում, այրում են նրանց խարույկների վրա թեժ,
Ցավից մեր սիրտն է պոռթկում, ազադակում է վրեժ,
Վրեժ վայրագ թշնամուց, վրեժ այն մարդ-գազանից,
Ահա ինչու մերկացան մեր սուր սրերը նորից:

Երգվել ենք մենք մինչև մահ, երգվել քո սուրբ անունով
Իրոշները տակ քո վե՛՛ն՝ ներկված մեր բորբ արյունով,
Որ պիտ ընկնի թշնամին, ինչ գրահ էլ նա կրի,
Որ հաղթանակը պիտ գա փայլով մեր բյուր սրերի,
Պիտի ծնվի բոցերից, ժպտան աշխարհը նորից,
Հավերժ անունդ լսվի մանկան անմեղ շուրթերից:

1944

ԴՅՈՒՅՍԱԶՈՒՆՆԵՐԻ ԵՐԴՈՒՄԸ

ՄԵՐ ԱՏԱԿՆԵՆ

Այս ցնծագին հանդեսին, երբ գնդերը բյուրավոր
Որշավում են դեպ վերջին հաղթանակը փառավոր,
Երբ մայր հողը ծայրե-ծայր ծով վրեժով է լցվել,
Երբ սրերը կայծակող քո արևով են օձվել,
Երբ հողագուռնդ է համայն վառուղի հոտը շնչում,
Աղբյուրները մեր սիրտ դեպի քեզ են կարկաչում:

Քեզ, որ ուզին ես դարձել ստեղծագործ մեր կյանքի,
Քեզ, որ հավատ, հաղթանակ, աղբյուր ես ծով բերկրանքի,
Քեզ, որ անմահ Լենինի հղոր շունչն է սքախ մեջ,
Քեզ, որ պահում ես նրա լույս ավա նդները անշեջ,
Քեզ, որ գարուն ես հավերժ ծաղիկներով խնկարույր,
Քեզ, որ ակունքն ես լույսի, հերոսության մայր աղբյուր:

* * *

Մայր վոլգայի ափերին, այն քաղաքում, ուր մի օր
Որդիները քո հերոս, արժիվները թևավոր,
Քեզ դիմեցին. — մեր դարի արևամիտ զորավար,
Այս սուրբ գետի այն ափին էլ հող չկան մեզ համար,
Կանգնիր, մարտիկ դյուցազուն, գրանիտի նման կուռ
Թող այս քաղաքը գառնա հաղթանակի ոսկեզուռ:

Սկիզբ առավ հաղթության գետը հղոր, ալիքվեց,
Լույս ապագան ավետող կրկին քո ձայնը լավեց,

Քո ձայնը, որ հնչում է շառաչներում բյուրավոր,
Ազգաբարձում աշխարհին՝ հաղթանակներ փառավոր,
Նոր շունչ, նոր կյանք է տալիս քաղաքներին ավերված,
Բռնակալի արնախում սև ճանկերից ազատված:

Մեր սերունդն է ծով սիրով քովա՞ս շողերը գրկում,
Մենք, որ կյանքը դարձնելով և՛ կռում ենք, և՛ երգում,
Չունենք մի այլ նպատակ, քան սրբազան հողը մեր
Տեսնել ազատ, երջանիկ, լուրթ երկնքում՝ արևներ,
Հեքիաթային մեր կյանքի շողը մանկան աչքերում,
Որն իր քաղցր մոր նման հայրենի տունն է սիրում:

Գալիս է նա, հողմաթև, կայծակների շառաչով,—
Հաղթության ժամը վերջին՝ ժամանակի ջերմ շնչով,
Մեր նոր դարունն ավետող որոտներով ահարկու,
Որ պիտ ծնվի փրվիրադեղ օվկյանների փոթորկում.
Այն դնւ ես, որ մարդկության երջանկության վեհ ժամին
Կազդարարես աշխարհում, ընկնով թունոտ թշնամին:

ՄԵՐՆ Է ՍԵՎԱՍՏՈՊՈԼԸ

Դու մերն ես կրկին, մերն ես, ծովերի անառիկ ամրոց,
Տես, փոթորկվում են ամեհի թափով ջրերն ալեկոծ,
Որպես հաղթության կանչը հողմաձայն մեր բանակների:
Որպես փրկաբեր սրերի շառաչ դյուցազուհների:

Ինչ պարիսպների ամեն քարն անգամ արյամբ է ներկված,—
Արյամբ բյուրավոր մեր հերոսների՝ հանուն հայրենյաց,
Որոնք անառիկ քո դռների մոտ նահատակվեցին,
Եվ հայրենական զրոշները բոլր փառքով օծեցին:

Դու մերն ես ահա: Թող ծովերն ամեն կրկին փոթորկվեն,
Աշխարհակործան զազիր թշնամու սե արյամբ ներկվեն,
Փառքի պսակներ բերելով անմահ մեր Հայրենիքին,—
Դու մերն ես կրկին:

Այս թիվն արձանացալ մեր մեծ, հայրենական
 Պատերազմի պայծառ պատմության մեջ,
 Երբ մեր գնդերն անկանգ, ոգով հերոսական,
 Սրտերի մեջ՝ կովի թեժ խարույկներն անշեջ...
 Գրոհեցին մեկեն, ինչպես օվկյան ելներ,
 Ինչպես գարնանային ամպերը որոտան,
 Բյուր սրերի փայլում՝ ազատության շողեր,
 Մեր զորքերը Օրյոլ ու Բելգորոդ մտան:

Խորտակվեցին կանգնած պատնեշները բոլոր,
 Զրահապատ անթիվ վագրեր մոնչացին,
 Թշնամին գալարվեց խոցված ու վիրավոր
 Օգոստոսյան պայծառ, վառվող լուսաբացին:
 Նա, որ խելակորույս թույնի բաժակն առած՝
 Իբ բզկտված վերջին զորքերը հավաքեց,
 Մահվան դառ տենդի մեջ զրահներով պատված՝
 Սև արյունով արբած՝ կրկին մեր դեմ նետեց:

Բայց խորտակվեց, ինչպես գիշերն արևի դեմ,
 Եվ վագրերը խոցված՝ գետինը փորեցին,
 Երբ հայրենի հողի ուժը բազուկներում,
 Մեր բյուր, վրիժառու գնդերն արշավեցին...
 Ու գնում են նրանք, արևներ են տանում,
 Տանում են սերն անմար, կարոտն Հայրենիքի,
 Հեռվից ձեռքը մեկնած՝ Խարկովն է ողջունում.—
 Իբ հարազատ, խիզախ սովետական զորքին:

Այդպես կանչում են մեզ այրված ու տրորված
Գյուղերն Հայրենիքիս և քաղաքներն ավեր,
Աղբյուրները զուլալ՝ արտասուքով լցված,
Բույրերն առևանգված, մայրերը սգավոր:

Գալիս ենք մենք, գալիս, ինչպես Օրյոլ եկանք,
Ինչպես եկանք, առանք գյուղերը բյուրավոր,
Ինչպես մեր հարազատ քաղաքները մտանք՝
Հանած աղատության սրերն արևավոր:

1943

ԿԱՐՈՏ

Կնտանք մեկտեղ այս գիշեր նորից,
Այս գիշեր առատ սեղան կրացինք,
Գինին կհանինք հին կարասներից,
Նոր, սլաճառ տարվա կենաց կմաղթինք:

Աստղերը երկնի զաղանի կժպտան,
Պարզկա գիշերին ինձ աչքով կանեն,
Որ գան, քեզ քաղցր բարկներս տան,
Անխարդախ սիրո կարոտս բերեն...

Քեզ, որ այս գիշեր գնդակների տակ,
Ցրտին ու ձյունին, փոթորիկներում,
Կովում ես, որ էլ երբեք չմարի
Կրակն հայրենի մեր օջախներում:

Ճոխ սեղանի մոտ միայն դնւ չկաս,
Դնւ, գարուն կյանքիս կուսական կարոտ,
Նայիր աստղերին, ինձ այնտեղ կզգաս,
Քեզնից անբաժան, հավիտյան քեզ մոտ:

1943

ԱՅԴ ՄԵՆՔ ԵՆՔ ԳԱԼԻՍ...

Այդ մենք եմք գալիս.
Շ. ԿՈՒՐՂԻՆՅԱՆ

Ինչպես հողմերի ամենակարող թռիչքը անտանձ,
Ինչպես ծովերի դուռ ակիքների փրփրադեղ թևեր,
Արյունով բերված հաղթանակների փառքով պսակված,
Փշրելով բոլոր երկաթազրահ դարպասները ձեր,
Այդ մենք ենք գալիս...

Ժամն է, որին մենք տենչացել ենք՝ ծով վիշտը կծկելով
եվ կուռակելով հնւրը վրեժի մեր կրծքերի տակ,
Կովկասյան հպարտ լեռնալանջերից ձեզ հալածելով,—
Մինչև Բեռլինի ավերակները ձեր հիմնահատակ—
Այդ մենք ենք գալիս...

Արդ ժամն է հասել, ժամը հատուցման, ժամը ցնծազին,
Դուք, արյունատենչ, խենթ բորենիներ, զգացք, տեսք,
Տեսք՝ մեր հպարտ լեռների նման բացած մեր ոգին,
Մեր երկնքի պես պայծառ ու թովիչ, անհուն, անեղերք,
Այդ մենք ենք գալիս...

Արդ կայծակում է հաղթության փայլով մեր սուրը անեղ,
Եվ քառասմբակ ճամբեքն է դովում կարիճ այրուձին,
Ինչպես երկնահաս բազում լեռներից ծառս եղած հեղեղ,
Հավատարմությամբ նվիրված մինչ վերջ մեր արդար գործին—
Այդ մենք ենք գալիս...

Այդ մենք ենք գալիս՝ Կովկասից չքնաղ, հեռու Սիբիրից,
Մայր Ռուսիայի լուրթ ստեպաներից՝ անհունում ձգված,
Ուկրաինայի բյուր բարիքներով լեցուն դաշտերից,
Վրեժի, ցամառն բորբ կրակներով մեր սիրտը վառած,
Այդ մենք ենք գալիս...

Գալիս ենք բոլոր ծովերից ցասկոտ, հողմերից ուժգին,
Ձեր մահն ենք բերում սրերով բազում մեր խաղաղատենչ,
Որ երջանկությամբ պսակենք համայն մարդկության ոգին,
Որ հաղթանակի արևը բերենք հավիտյան անշեջ—
Այդ մենք ենք գալիս...

ՄԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳԵՆԵՐԱԼՆԵՐԸ

Բամակի գեներալ ԲԱՂՐԱՄՅԱՆԻՆ

Հայրենի հողի ուժով մոլեգին,
Հանած կայծակող անեղ սրերը,
Դարձել են կոլի անառիկ ոգին
Մեր սովետական գեներալները:

Կայծակն է զարկում, հողմերն են շահում,
Եվ փոթորկվում են լուրթ օվկյանները,
Վերջին, վճռական մարտի են կանչում
Մեր սովետական գեներալները:

Այն ուղ է խոցում կուրծքը թշնամու,
Ճեղքում անառիկ բյուր պարիսպները,
Այդ նրանք են միշտ առաջ սլանում—
Մեր սովետական գեներալները:

Դաշտերն են լցվում ջինջ վտակներով,
Ժպտում են պայծառ մեր մանուկները,
Ուր ոտք են դնում հաղթանակներով
Մեր սովետական գեներալները:

Հաղթող դնդերին շունչ, ոգի դարձած,
Աշխարհին պարզած ալ դրոշները—
Բեռլին կմտնեն հրթով սրընթաց
Մեր սովետական գեներալները:

1944

ՆԱՄԱԿ

Կարոտս ձյունոտ լեռներից անցավ
Աղափնու թևին՝ կապույտ երկնքով,
Անուշ մայրիկից նամակ ստացա,
Նամակ ստացա՝ դրված արցունքով:

Ջերմ կարոտներով գիրը կարգացի,
Ամեն տողի հետ իմ մայրն էր ժպտում,
Ասես թե նրա ձայնը լսեցի,
Սերը մայրական վառվեց իմ նրտում:

Մայրս դրում էր.— Իմ քաղցր բալա,
Եկ գեթ մի օրով, կարոտս առնեմ,
Աչքս ջուր կտրեց, հերիք է մնամ,
Ե՛կ, ես քո գարձի ճամբեքին մեռնեմ:

Պարտեզի բոլոր մրգերը հասել,
Ժպտում են քո վառ աչքերի նման,
Ծառերի հովին շատ եմ սպասել,—
Թե ահա կգա իմ աղիղ բալեն:

Ուր էլ գնում եմ, ինչ էլ ուր անում,
Ամեն տեղ քաղցր անուշիկ եմ տալիս,
Երեկոները տանիք բարձրանում,
Նայում եմ ճամփիդ, բայց դու չե՞ս գալիս:

Ա՛խ, թու՛ր, արի՛, իմ կարիճ որդի,
Արի հայրենյաց ծանոթ դաշտերով,
Մուրազս առնեմ կարոտած սրտի,
Վերքերդ բուժեմ իմ արցունքներով:

* * *

Նորից կարդացի գիրը մայրիկիս,
Կարոտս ինձ՝ մեր սարերը տարավ,
Երազում տենդից վառվում էր հողիս,
—Մայրի՛կ, կանչեցին շուրթերս ծարավ:

1944

ԿԱՐՈՏԻ ԵՐԳ

Պարտիզում դալար մի ծառ տնկեցիր,
Երբ նոր էր բացվում լեզուն քո մանկան,
Պտուղը չառած՝ կռվի գնացիր,
Թողիր օջախը քո հայրենական:

Կռվի գնացիր՝ սերը քո սրտում,
Որ հանգիստ աճի դեղձենին դալար,
Որ դարունները ժպտան քո սրբուն,
Եվ ճամփա բացեն քո դարձի համար:

Տարիներն անցան: Դեղձենին աճել,
Ճյուղերն է փռել ձեր կանաչ բաղում,
Մանկիկդ էլ արդեն հասակ է առել
Եվ խաղ է անում նրա շվաքում:

Նրանք երկուսն էլ նույն ջերմ կարոտով
Սպասում են քեզ, խիղտի մարտիկին,
Թե երբ կարկաչուն առվակի մոտով,
Ծանօթ ճամփեքով կդառնաս կրկին:

1944



ԱՆԵՈՐՏԱԿ ԱՄՐՈՅԸ

ԼԵՆԻՆԳՐԱԳԻՆ

Այն դճւք էիք ուզում խեղդել մարմարակիրտ քաղաքն հերոս,
Դճւք, վանդալներ եղեռնազործ, ձեր երկաթյա օղակի մեջ,
Գիտե՞ք արդոք, որ Լենինն է վառել այնտեղ ինչպես փարոս,—
Նորարողը զարուն կյանքի խարույկները հավերժ անշեջ:

Այնտեղ հողի մի բուռն անգամ, ամեն հնոց, ամեն մի քար
Լենինյան վեհ, պայծառ դարի կուռ ողին է իր մեջ կրում,
Այնտեղ աճել են սերունդներ, քրտնել, աքնել են դարեդար
Եվ մեր կյանքի հիմնը դարբնել Հոկտեմբերի կրակներում:

Փշրվեցին ձեր արնաներկ ժանիքները պատնեշի դեմ,—
Կճւռ, անառիկ այն պատնեշի, որ ժողովուրդն է կտուռեցել,
Կյանքի, մահվան այն օրերին ձեռքին ջահը՝ մեծ Լենինի,
Իր վիթխարի հասակով մեկ Լենինգրադն էր բարձրացել:

Այնտեղ Նեան էր կուտակում ցասման վրեժն իր մեծ սրտում,
Իր գորշ ջրի կաթիլն ամեն խառնած արյան ու արցունքի,
Կրակների ահեղ լեզվով Լենինգրադն էր որոտում,—
Մարտնչում էր արիաբար՝ միշտ վառ պահած իր վեհ ողին:

Հասավ ժամը հաղթանակի վսեմափայլ, երջանկաբեր,
Եվ նա կրկին ոտքի ելավ՝ դուռը վեր մըրիկներից,
Ինչպես ամբոց մի անխորտակ կանգնեց քաղաքն արևաբեր,
Ողջույնի կանչն հաղթանակի աշխարհով մեկ փուլեց նորից:

Սլանութեան հին անա կրկին շողեքարշերը սրբնթաց,
Զրնգում է հեռուն ձգված Հոկտեմբերյան երկաթուղին,
Ձերմ ողջուն է բերում իր հետ բյուր սրտերից բոցավառված,
Հաղթանակի ուղին բռնած, վերածնված մեր մայր հողին:

Լենինն իր կուռ սլաութանդանից, Փինլանդական կայսրանում,
Սրենհրին ձեռքը պարզած՝ շունչ է տալիս մեր զորքերին,
Որոնք հայկերթ փառքով օծված դրոշներն են անա տանում,—
Դեպի դալիքն աստեղավայլ՝ բարձր բռնած կուռ ձեռքերին:

1944

* *
* *
* *

Այսօր նորից կլցվեն բաժակներն արծաթ
Հնձաններից տուն բերված կարմրավառ գինով,
Մայրս սեղան կբացի ուրախ և հպարտ,
Առատ մրգեր կբերի ոսկեղեն սինով:

Ողջույնի ջերմ խօսք կասի հայրս ճերմակած,—
Վառված պայծառ հույսերով մեր հաղթանակի,
Որպես հեռվում մարանչող իր սրբու կենաց,
Որպես կենացը հզոր մեր Հայրենիքի:

Իմ փոխարեն նա սիրով կգառարկի մի բաժակ,
Որ ես կուլից տուն դառնամ մեծ հաղթանակով,
Որ կարոտով չնայեն ճամփիս շարունակ,
Ինձ ընդունեն գրկաբաց, ծաղկեպսակով:

Իսկ ես կուլող զինվորի սեղանը բացած,
Ընկերներիս կկանչեմ ինձ մոտ՝ խնձույքի,
Անուշ կանենք հին գինին՝ Հայրենիքից զրկած—
Որպես նշան ջերմ սիրո և ծով բերկրանքի:

1945

ԶԻՆՎՈՐԻ ՆԱՄԱԿԸ

Ծրձեռնակի թևի հետ, ինչպես վառվող մի կարոտ,
Կտրեց դաշտերն ու անցավ լուրթ կապույտը ծովերի,
Անցավ լեռներ ձյունածածկ, անցավ ճամփեքը քարոտ,
Եվ դեպի տուն հայրենյաց նամակ եկավ զինվորի:

Մայրը դողդոջ ձեռքերով բացեց նամակն իր որդու,
Արցունքներով խնդության թրջեց տողերը բոլոր,
Նամակի հետ, կարծես թե, իր որդին էր գարձել տուն,
Իր մուրազը սսկեղեն, իր կարոտը հեռավոր:

Երկար նայեց, փայտայեց թղթի կտորն սպիտակ,
Որ հուր լեզվով բլբուլի ասես իր հետ էր խոտում,
Թվաց՝ սիրտն է իր որդու զրված ամեն տողի տակ,
Եվ խոր կարոտն ամոքող բարախումներն է լսում:

ԱՇՏԱՐԱԿ

Գեղեցկանիս է Աւսարակ...
Ս. ՇԱՀԱԶԻԶ

Հայրենի հող, գեղատեսիլ Աշտարակ,
Սյգիներդ անա շուտով կբացվեն,
Վարդի կախարդ բուրմունքներով անապակ
Հայրենական օջախներդ կլցվեն:

Նորից դարնան շունչը պիտի սավառնի
Քո գեղանիստ և դմբուխտյա լանջերում,
Զորը կիջնեն աղջիկներդ գեղանի,
Հերոս աղի ծով կարոտը սրտներում:

Գարնան շնչից բացվող ամեն թփի մեջ,
Ողկույզներում անմահական խաղողի
Նոր կյանք կառնի որդուդ արյունը անշեջ,
Որպես անվերջ բաբախումները հողի:

Դու դարնան հետ, ծիծեռնակի թևերով
Հեռվում կույող որդուդ բարև կուղարկես,
Խոր կարոտդ կանցնի կապույտ ծովերով,
Մաքիդ թևով նրան մի պահ կգրկես:

Յհամբուրես բայ ճակատը ջերմ սիրով
Եվ կհանես գնդակը նենգ ոտխի,
Նա կբուժվի քո սրտագին համբույրով,
Զուլալ ջրով լեռնակարկաչ Գասախի:

Նոր ուժ առած՝ նա հողմաթև կարշավի
Եվ հաղթորեն կգա գիրկդ անարատ,
Ծով կարոտով քո լանջերին կփարվի
Այգիներիդ, դրախտային Աշտարակ:

1944

ԵՐԳ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ

Մեր հաղթ բանակ, վեհ անուն, դու ջահակիր հաղթութեան,
Քեզ է աշխարհը նայում որպէս արև փրկութեան,
Քեզ, որ փառքով օծվեցիր կյանքի, մահվան մարտերում,
Քեզ, որ այս վառ մայրիտին նոր հաղթանակ ես բերում,
Քեզ, որ փշրել ես արդեն դարպասները Բեռլինի
Եվ գնում ես սրբաշավ՝ վառված սիրով հայրենի:

Հաղթանակի մայրիտն է անա ժպտում մեր կյանքին,
Սրով, արյամբ վաստակած վարդերը վառ քո ձեռքին,—
Տեսնում ես դու, թե ինչպէս այն՝ Բեռլինն է մոխրանում,
Որը մի օր մոլեղնած՝ մեր դաշտերով սլանում,
Սրբում, տանում էր ամեն բարիքները մեր հողի,
Կյանքն արևից էր զրկում, որդուն՝ քաղցր ծնողից:

Բայց նա խոցված է արդեն հզոր զարկով քո սրի,
Նա, որ կարծում էր իրեն արքան ու տերն աշխարհի,
Գալարվում է մահամեծք, թափում է թույնն իր վերջին,
Սարսափով է նայում քո անեղ սրի շառաչին:
Խաղաղութեան շունչն ես դու տիեզերքին ավետում,—
Նորաբողբոջ մեր կյանքի զարունները քո սրտում:

ՀԱՂԹԱՆԱԿԻՅ ՀԵՏՈՒ

Երբ հաղթանակով ես դառնամ մի օր
Եվ կրկին մտնեմ հայրենական տուն,
Հարազատներս հյուր կգան բոլոր,
Մայրս կփարվի կարոտած որդուն:

Քասախն ինձ անուշ ողջուն կրերի
Ջինջ ալիքների թևերով ձերմակ,
Որի ծաղկավառ կանաչ ասիերին
Ես խաղացել եմ անհոգ ու անհագ:

Հողը հայրենյաց ջերմ սիրով բյուրեղ
Իր կաթով սնած որդուն կընդունի,
Սուրս հաղթողի, բազուկս դորեղ,
Բայց սիրտս՝ դարձյալ անմեղ պատանի:

1944

ՄԵԾ ԱՏԱԼԻՆԻՆ

Քյուր շուրթերից նվիրական քո անունն է սիրով հնչում,
Աղբյուրները մեր ծով սիրո միշտ դեպի քեզ են կարկաչում,
Քեզ, որ վրկիչն ես մարդկության, հաղթանակի հավատ դարձած,
Հզոր շունչը հայրենիքի հավերժ քո մեջ է մարմնացած:

Ժողովուրդներ բազմալեզու, որպես ախուճն իրենց կյանքի,—
Քեզ են հղում ձայնն առաջին՝ բացած դռները հրճվանքի,
Ձգտում են քեզ, տենչում են քեզ, մեր բարախող սրտերը ողջ,
Ինչպես տենչում է արևին ամեն ընձյուղ, ամեն բողբոջ:

Դու կյանք տվիր մեր հույսերին, մեր իղձերին, մեր երազին,
Դու հայրթյա՛նը տարագիր հասցրեցիր իր մուրազին,
Այն հեռավոր եղբւրքներից մեր եղբայրները դարձան սուռն,
Որդին գտավ իր ծնողին և ծնողը գտավ որդուն:

Եկան նրանք և սրտաբուխ սիրո խոսքը քեզ հղեցին,
Հողն հայրենի ուրախության արցունքներով ողողեցին,
Թե Հայաստանն էին թողել լուռ ծխացող մի ավերակ,
Այժմ գտան նրան հզոր, վերածնված՝ քո լույսի տակ:

Մեծ առաջնորդ իմաստնադուէյն, Հայաստանը քո ջերմ շնչով
Լցվեց լույսով ու խնդու-թյամբ, մանուկների ուրախ կանչով,
Ծաղիկներով հազարաբույր դարուն բացվեց նրա սրտին,
Մեր ժողովուրդը տառապյալ տեսավ վարդերը դրախտի:

Մեծ Ստալին, միտքդ հզոր մեր գալիքն է ծիածանում,
Քո պատկերն է մեր օրախ մեջ, մեր մտքի մեջ անմահանում,
Առաջատները մեր նավի հողմերի դեմ հպարտ բացած՝
Տանում ես մեզ դեպ ապագան՝ քո հանձարով իմաստնացած:

1947

ԻՄ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔ

Ինչպես լեռների կատարները վեհ դեպ երկիրնք ձգված,
Ինչպես բնության ուժը կախարդիչ և ամենազոր,
Քո հաղթանակի, մեծ խաղաղության լույսերը վառած՝
Կանգնած ես նորից դյուցազնի նման անսպառա ու հզոր,—
Իմ մայր Հայրենիք:

Նոր կյանք են առնում հողմերից հետո քաղաքները մեր,
Սուրբ ազատության շունչն է սալառնում դաշտերի վրա,
Արդար վաստակով լցվում է կրկին հողը բարեբեր,
Հրեղեն երգով ողջունում ես դու երկունքը նրա,—
Իմ մայր Հայրենիք:

Սյու մեծ հանդեսին, երբ հաղթանակի փողերն ենք փչում
Հավերժ անառիկ մեր ամբոցների դռներին կանգնած,
Ամեն անկյունից մանկան անխարդախ երգն է կարկաչում,—
Քո ստեղծագործ, երջանիկ կյանքի հույսերով վառված,
Իմ մայր Հայրենիք:

1945

* * *

Յար ջան, դարձել ես հաղթողի տեսքով,
Ա՛խ, ես քո դարձի ճամփեքին մատաղ,
Դարձել ես սրտիս սիրավառ երգով,
Սերս երազող քո երգին մատաղ:

Տուն եկար լիառքի շողշողուն սրով,
Թշնամուն դարկող քո սրին մատաղ,
Եկար մեր կանաչ դժբուխտ սարերով,
Քո ջերմ վայփայած հույսերին մատաղ:

Հայրենի տանը բարև ավեցիր,
Հեռվից տուն բերած բարևիդ մատաղ,
Բախտս բացեցիր, արև ավեցիր,
Քո գարուն կյանքի արևին մատաղ:

1945

ՄԵՆՔ ՀԱՎԱՏՈՒՄ ԷՒՆՔ

Մենք հավատում էինք մեր մեծ հաղթանակին,
Որ նա կգն արյամբ ու քրտինքով թափած,
Միշտ կփելով հրում մեր անառիկ ոգին,
Կրճճներին տակ լշտի օվկյանը կուտակած,—
Մենք հավատում էինք...

Մենք հավատում էինք արև առաջնորդին,
Նրա մտքի, ոգու ուժին տխտանական,
Նն, որ կուլի տարավ հզոր ժողովրդին
Եվ մարտիրոս կոփեց գնդերն հերոսական,—
Մենք հավատում էինք...

Մենք հավատում էինք, որ մեր կրեմլի դեմ
Ռայխստագը գորշ մի օր ծունկի կգա,
Անեծքով թշնամու անունը կհիշեն,—
Աերունդները բոլոր ներկա և ապագա,
Մենք հավատում էինք...

Մենք հավատում էինք: Եվ այդ լույս հավատով
Հաղթանակի վսեմ արշալույսը բացվեց,
Բազում մեր գնդերի գյուցաղնական զարկից,
Աշխարհավեր, դժնի Բեռլինը կործանվեց...
Մենք հավատում էինք...

Եվ մենք հավատում ենք, հավատում ենք նրան՝
Մեզ զարուհներ բերող արև առաջնորդին,
Դեպի կոմունիզմի կատարը հուրհրան
Նն է տանում մեր մեծ, հաղթող ժողովրդին,—
Եվ մենք հավատում ենք...

ԹԱՓԱԾ ԱՐՅՈՒՆԸ ԻՄ ԸՆԿԵՐՆԵՐԻ

Երբ արշավեցին մեր դեմ մոլեգնած
Բյուր բանակները թշնամիների,
Ռազմի հզոր զրահները հազած,
Ելան գնդերը իմ ընկերների:

Ընդդեմ թշնամու կանգնեց մոլեգնած
Կամքը միաձուլլ ժողովուրդների,
Մեր սարերն անգամ՝ վրեժով վառված, —
Բորբ արյամբ օծված իմ ընկերների:

Հեքիաթ ասողերով երկինքը ժպտաց,
Արևի շողը դիպավ սարերին, —
Դա հաղթանակի շունչն էր մարմնացած,
Որ եկավ արյամբ իմ ընկերների:

Լույս Հայրենիքիս դաշտերը կանաչ
Եվ ժպիտները ջինջ մանուկների
Շողացին, ինչպես արևի ճաճանչ
Թափած արյունով իմ ընկերների:

Կարոտած սրտի մուրազը բերեց,
Կտրեց արցունքը բազում մայրերի,
Դաշտերը կրկին ծաղկունքով լցրեց
Թափած արյունը իմ ընկերների:

ԱՇՏԱՐԱՍԿԻ ՉԻՆԱՐԻՆ

Հայրենիքում իմ գեղանիստ, ուր խաղողն է քաղցրանում,
Ուր նրա բույրն անմահական մինչ երկինք է բարձրանում,
Կարկաչահոտ առվի ափին, հենված մամուտ մի քարի,
Դեռ շատ հնուց մինչև այսօր կանգնած է մի չինարի:

Չինարու տակ մայրը իրեն կտրիճ որդուն էր գրկում,
Համբույր տալիս բաց ճակատին և կռվի դաշտ ուղարկում,
Երբ սիրուհին սրտի ձայնով առն էր կանչում իր յարին,
Հով էր անում, սեր շնջում էն մենավոր չինարին:

Երբ կարոտից միակ որդու մորս սիրտն է վշտացել,
Ավանդական մեր չինարին ասես լեղու է դարձել,
Շշնջացել՝ թե նա կգա, նա կգառնա գեպի տուն,
Նոր խնդությամբ ու նոր սիրով դու կփարվես քո որդուն:

Այդպես կանգնած էն հնամյա, գեղեցկատես չինարին
Սաղարթախիա իր ճյուղերով հով է անում ջրերին,
Անցվորների ճամփան մաղթում, որ գան-գնա՞ւ ամեն օր,
Իր հովի տակ հանգիստ առնեն նոր զույգերը բախտավոր:

Ահա կրկին դարձել եմ ես՝ լցված տենչով ու սիրով,
Էն մենավոր ծառը նորեն իր բյուրավոր աչքերով,
Բարբի սրտով նայում է մեզ, փպտում ինձ ու իմ յարին,
Հեքիաթային, հավերժ կանաչ Աշտարակի չինարին:

ԵՂՐԱՅՐՈՒԹՅՈՒՆ

Ես հայ եմ...

Ծնված այգիների կախարդական գրկում,
Արագածի հովտում, ափին իմ Քասախի,
Ուր սոխակն է վառվող վարդի սիրուց երգում,
Ուր արևն է լցնում ողկույզը խաղողի
Անմահական հյուսթով, իբր լույսն է ներարկում
Եվ կյանք տալիս նորին մարդուն, հողին:

Ես սիրում եմ սիրով մի անսահման
Իմ հայրենի հողը, օջախն իմ հայրենի,
Սիրում եմ Արարատյան դաշտը ամռան,
Որ փայլում է ինչպես ոսկով լիքը սինի,
Բաժակներում լցված ինչպես հյուսթը նռան
Փրփրում է գինին:

Ես սիրում եմ այգիները՝ առատ բերքով
Սիրում եմ դաշտերը մեր համայնական,
Որ լցնում են օջախները հացի երգով,
Սիրում եմ Արագածը, Սևանն իմ կապուտակ,
Սիրում եմ Աշտարակը, սրտիս ամեն զարկով
Նրա շունչն զգալով մատաղ իմ կրճքի տակ:

Վարձողյա, իմ բարեկամ, դու իմ ոուս եղբայր,
Գիտեմ որ նույն սիրով դու Վոլգան ես սիրում,
Վոլգան, որի ափին դու մեծացար
Եվ խաղացիր անվերջ նրա ալիքներում,
Մի՛րեցիր ուսական ստեպները անծայր,
Որոնց կապույտ փայլն է շողում քո աչքերում:

Դու սիրում ես լեզուն, դիրը քո մայրենի,
Դու սիրում ես վճիտ երգերն ուսասկան,
Ինչպես ես եմ սիրում բարբառն իմ հայրենի,
Մեր Մաշտոցի գիրը և խոսքը հայկական,
Դու տքնում ես անվերջ, որ հացը ծով լինի
Անձայր քո դաշտերում համայնական:

Դու քրտինք ես թափել, գրել քարը քարին,
Որ միշտ կանգուն լինի օջախը հարազատ,
Տերերի դեմ անվերջ ելել ես պայքարել,
Որ վաստակը ձեռքիդ դու վայելես ազատ,
Այդպես էլ եմ գրկում չքնաղ մեր լեռների
Իմ նոր տունն եմ շինել— դեմը մայրն Արարատ:

Մենք հին դարերից ենք սիրով եղբայրացել,
Մեր մեծ նախնիների անդավաճան սիրով,
Թշնամու դեմ մեկտեղ մեր սուրն է բարձրացել
Մեր խարույկն է վառվել միշտ նույն հրով,
Մեր նժույզներն աշխտ մեկտեղ են սուրացել,
Թեպետ տարբեր ենք մենք միայն լեզվով, գրով:

Երբ իմ հողն է խուժել վայրագ, նենդ թշնամին,
Դու մեկնել ես ձեռքդ անկեղծ եղբայրության,
Հասել ես հողմաթև, ամեն ծանր ժամին
Ստեպաներից ելել, եկել ես օգնություն
Հայոց երախտապարտ ու հին ժողովրդին,
Որը քեզնով դատվ ուղին իր փրկություն:

Այժմ թե ես, թե դու ունենք մի մեծ երկիր—
Փռված երկրագնդի մեկ-վեցերորդ մասում,
Դա մեր Հայրենիքն է՝ կյանքի նոր ջահակիր,
Որի բաբախումն ենք մեր սրտի տակ լսում,
Որի շնչով այսօր լցված իմ վառ ոգին
Մեր մեծ եղբայրություն սիրո երգն է հյուսում:

Իսկ թե չսիրեիր դու Վուգային քո մայր,
Ստեպաները քո լաջն, փոված անեղբական,
Թե ես չտխրեի Երևանի համար,
Չսիրեի սրտանց իմ հողը հայկական—
Ձեխնք կարող կապվել մենք իրար հետ երբեք
Եղբայրու-թյան ոգով, սիրով նվիրական:

Թե ես, թե դու մեկտեղ հայացքներս ենք հառել
Մեր կրեմլի վերձիղ, պայծառ աշտարակին,
Այնանց է մեր բախտի անմար լույսը վառել
Առաջնորդը մեր մեծ, նոր շունչ ավել կյանքին,
Նո՛ւ, որ մեր սրտի մեջ դարբնել է ու կռել
Հայրենիքի սիրտ, եղբայրու-թյան ոգին:

1947

ՄԵՐ ՍԵՐՈՒՆԿԸ

Печально я илжу на наше поколение...

М. ЛЕРМОНТОВ

Ես պայծառ եմ նայում այսօր մեր սերնդին,
Նա մեր կյանքի հուշան է, ներկան ու ապագան,
Հալատարիմ իր մայր, իր մեծ ժողովրդին
Վառ պահելով նրա փառքը հերոսական.
Նրան իր դալիքն է ժպտում հազարաբիբ,
Ինչպես կրեմլի աստղերն հավերժական:

Նա սերունդն է այս նոր, ստալինյան դարի,
Նա հարսնատ է, բերրի, հանաչ իր դաշտերով,
Հարսնատ է վաստակով բազում գաղգյահների,
Որ կռել է, կռիել արյամբ ու քրտինքով,
Նա հզորա է ուժով իր մոլեգնող սրի,
Հզորա է մարդկային և սրտաբուխ կրգով:

Նա և գիտե անխոնջ մաքառումով արքնել,
Նա միաքն է գիտության լույսով թեև փորում,
Իր մարդկային ոգու բյուր գանձերն է հանել—
Փռել շոալյուրեն այս նոր, մեր աշխարհում,
Մեր նորաստեղծ կյանքի լույսերն են չմարող
Շողում իմաստությամբ նրա լուրթ աչքերում:

Դարձած ստեղծագործ շունչը հնգամյակի
Դիտե նոր գիգանաներ կրկին ոտքի հանել,
Հասկանալով կարծես լեզուն ամեն հասկի,

Գիտե ինչպես ոսկյա ցորյանները ցանկը,
Նա կրողն է ազատ և ճշմարիտ խոսքի
Եվ այդ հավատով է իր այսօրը բերել

Մեծ սրտի մեջ սիրո, աշխատանքի երգեր,
Քրտինքով է բացում աղբյուրն առատության,
Նա և՛ զինակից է, և՛ մտերիմ ընկեր,
Թե խնճուղքի ժամին, թե փորձության,
Շատ անգամ է նա իր անձը զոհել
Հանուն հայրենիքի երջանկության:

Եվ նա զիտե սիրել, սիրել ամբողջ ոգով
Ուժով անձայրածիր կանաչ իր դաշտերի,
Բոլոր գիզանտների, դաղգյահների ուժով,
Ուժով երկինք ելած կապույտ իր լեռների,
Նվիրական սրբու անասական սիրով,
Նա սիրում է պարտիան բոլշևիկներին:

Նա սիրում է Լենինին, որ մեր պարտիան կոփեց,
Բերեց ազատության թռչունը թևավոր,
Նա սիրում է Ստալինին, զորավարին իր մեծ,
Առաջնորդին, հորը, որ Լենինն է այսօր,
Որ զու մրբիկներից հաղթանակով հանեց,
Եվ անառիկ դարձրեց իր հայրենիքն հզոր:

Նա թշնամուն ատել զիտե նույն կրակով,
Պայծառատես ոգու իր մրբիկող ցասմամբ,
Նա տեսել է արդեն ու զգացել հոգով,
Որ արյանը պետք է պատասխանել արյամբ, —
Մինչև ազատ շնչի հողն իր հեքով
Եվ արևը մարդուն ժպտա խաղաղությամբ:

Ես հպարտ եմ նայում այսօր մեր սերնդին,
Նրան, որ սրտի մեջ ունի հազար դարուն,
Հավատում եմ նրա ասպագայի բախտին,
Հավատում եմ նրա պայծառ սիրուն,
Արդ իր սրտից բխած սիրո երգը շուրթին՝
Հնգամյակի թևով նա իր վանդն է բերում:

ՄՈՍԿՎԱՅԻ ՁԱՅՆԸ

Ամեն, ամեն վայրկյան մայր Մոսկվան է խոսում
 Լեզվով՝ իր հարազատ բազմազգ զավակներին,
 Նրա ձայնն է համայն տիեզերքը լսում,
 Լցվում իմաստությամբ, շնչով գարուններին:

Ես մայր Մոսկվայի ձայնն եմ լսել այն ժամ,
 Երբ թշնամին նրա դարպասներն էր բախում,
 Երբ Աթիլի որդին ատելությամբ դաժան,
 Մոսկվայի վրա իր սև սուրն էր կախում:

Բայց այդ ծանր ժամին լցված իմաստությամբ՝
 Առաջնորդի ձայնն էր հնչում ամենազոր, --
 Այդ խոսում էր Մոսկվան, Մոսկվան իր էությամբ
 Դարձած հաղթանակի գարբնոցը մեր հզոր:

Մոսկվայի ձայնն եմ լսել այնտեղ, հեռվում
 Երբ մենք արշավելով գոտոլ Բեռլինն առանք,
 Երբ հաղթության չքնաղ ծիածանն էր փռվում,
 Երբ Էլբայի սփին հասած մենք կանգ առանք:

Ու խոսում էր Մոսկվան ամբողջ աշխարհով մեկ,
 Առաջնորդի սրտանց ողջույնն էր մեզ բերում,
 Մեզ բերում էր և՛ ուժ, մեզ բերում էր և երգ,
 Ալիքներին թևով զրկում էր, համբուրում:

Մոսկվայի ձայնը մեզ տալիս է ոգի,
 Հաղթանակի հավատ և պայքարի կարող,
 Այնտեղից է բխում աղբյուրը մեր կյանքի.
 Մոսկվան — այդ մեր սիրտն է՝ լեցուն իր մեծ սիրով:

ԱՅՍ ԻՄ ԵՐԵՎԱՆՆ Է

Այս իմ Երևանն է՝ հայացքն Արարատին,
Թրին տված Նորքի այգիներին կանաչ,
Սաալինյան դարի գրոշմը ճակատին,
Որպես մեր նոր կյանքի անմահության զողանջ —
Այս իմ Երևանն է...

Այս իմ Երևանն է, ուր լսադողն է հասնում,
Ժպտում է արևին՝ տեսքով կախարդական,
Ուր բույրը վարդերի երկինք է բարձրանում,
Ուր գինին է բխում և ջուրն անմահական —
Այս իմ Երևանն է...

Այս իմ Երևանն է, ուր Ձանգուն է հոսում, —
Դառնում լույսի աղունք, դառնում հզոր տարերք,
Ոգի և շունչ տալիս գազգյահներին բազում,
Կյանքի աղբյուր և նորաստեղծ մի երգ —
Այս իմ Երևանն է...

Այս իմ Երևանն է, սր հայ գինվորների
Վահանների վրա իր անունը կրեց,
Շողաց փայլում նրանց կայծակ սվինների
Եվ թշնամու զազիք սիրտը շանթահարեց —
Այս իմ Երևանն է...

Այս իմ Երևանն է, գարունը մեր հույսի,
Ուր նորաստեղծ կյանքի մարդն է անմահանում,

Ուր ինչպես երկնացայտ շատրվանը լույսի
Բաղմավաստակ մտքի կոթողն է բարձրանում —
Այս իմ Երևանն է...

Այս իմ Երևանն է՝ սիրտը Հայաստանի,
Այս իմ տունն է, կյանքն է, իմ սերն ու քնարն է,
Ամենավառ էջն է ոսկյա մեր մատյանի,
Մեր ձեռքերով, կամքով կերտված նոր հանճարն է —
Այս իմ Երևանն է:

1946

Մ Ա Յ Ր

Մայր, կյանքը դարբնող քո որդիներէ ոսկե հանգրվան,
 Մայր, դու մեր սիրո ու մեր մաքաւման մարմնացած ոգի,
 Բո սիրտը վսեմ, ամենակարող սերդ մայրական.
 Վառվեց մեր սրտում ինչպէս կենսալից շողն արեգակի:

Մայր, երբ ռազմի շեփորը հնչեց՝ դեպի հաղթանակ,
 Դու հայրենիքին հանձնեցիր առյուծ քո որդիներին,
 Բո պատվի համար դեպի կովի դաշտ դնացին նրանք,
 Որ ազատութեան շունչն իմաստնացած բերեն աշխարհին:

Մայր, դու կարող ես համայնապարիակ վիշտը կուտակել
 Բո բարի, քո ջերմ, քո արդարադատ, դուլալ սրտի մեջ,
 Մայր, դու կարող ես և նույնքան ուրախ վայրկյաններ ապրել—,
 Տեսնելով որդուդ ձեռքերով վառած խարույկներն անշեջ:

Եվ դու նայեցիր, թե ինչպէս որդուդ արյունը շողաց
 Մայր հայրենիքի կյանքի և պատվի դոհասեղանին,
 Բայց մյուս որդիդ հրեղեն ձիով շեմքիդ երևաց,—
 Արյամբ վաստակած մեծ հաղթանակի դրոշմ ձեռքին:

Դու հպարտ ես, մայր, դու, որ կրել ես վիշտն ամենամեծ,
 Դու, որ հաղթութեամբ տուն դարձած որդուդ կրծքիդ սեղմեցիր,
 Բո ջերմ համբույրից նա ոգի առած նոր ուժով լցվեց,
 Եվ դու մեր կյանքի ակունքն անապակ ու մայր ֆուսիք:

Նա եկել էր Դնեպրի զմբուխտաշող ափից
 Եկել էր ստեպաներից ուկրաինական,
 Հայացքը ջինջ գարուն, սիրտը մաքուր, անբիծ
 Հագած ջինեյը գորշ, զինվորական,
 Մեր հետևակ վաշտում եղբայրն իմ զինակից
 Պաշտպանում էր իր հողն հայրենական:

Եվ երբ այնտեղ հզոր հրանոթները մեր
 Լուծ էին մի պահ ու դադար էր տրվում,
 Պատմում էր նա սիրով կարոտալատ հուշեր
 Իր հայրենի գյուղից, ուր գարունն էր բացվում
 Ծաղիկների բույրով, և Դնեպրը ծեր
 Աղջիկների սիրտ զողանջներով լցվում:

Նա ինձ ասում էր միշտ, — երբ այս կռիվը ուժգին
 Մենք սվարտենք պատվով և տուն վերադառնանք
 Կգնանք գյուղ, մեկ մոտ, մեր բալենու այգին,
 Կանաչ այն կաժանով մենք վեր կբարձրանանք,
 Ուր թողել եմ սիրուս բողբոջը թանկագին,
 Որ պիտ բացվի, երբ մենք կրկին վերադառնանք:

Իսկ ես պատմում էի մեր նոր Երևանի,
 Հայաստանի չքնաղ այգիների մասին,
 Իմ սվինի ծայրով գծում էի հողին
 Զյունագագաթ ու վեհ կատարները Մասի,
 Նրա հողնած դեմքին լուռ ժպիտան էր խաղում,
 Զեռքով թիթևակի խփում էր իմ ուսին:

— Բեզ հյուր պիտի տանեմ, — ասում էի նրան.
Հայաստանը մեր նոր, երկիրը խաղողի,
Ուր վառվում է ամռան արևը հուրհրան,
Ուր առնում ենք բոլոր բարիքները հողից,
Ուր մեր ձեռքով հերկած խոպանները վրա
Քրտինքով հնք բացել երջանկության ուղին:

Այդպես կովում էինք հայ և ուկրաինացի,
Թշնամու դեմ մեկտեղ կրակ էինք բացում,
Մեր սրտի մեջ մի հույս, լուսե մի նախասակ,
Մի միտք, մի սեր մաքուր, պայծառ մի դգացում,
Պատիվն էինք պահում աշխատեղ, կրակի տակ
Սովետական երկրի, քաղաքացու:

Բայց երբ դադար առանք մի օր, մարտից հետո,
Ես չգտա նրան, իմ լավ բարեկամին,
Ասվակը մեզմաձայն լալիս էր կարոտով,
Շշնջում էր կարծես անտառի մեջ քամին,
Որ նա ընկավ անդարձ, իր կրակոտ սրտով
Մեր հարձակման այն թև և փոթորկոտ ժամին:

Ես նայեցի շուրջս, պատգարակին դրած
Բերում էին նրան երկու ջահել զինվոր,
Արյան շիթեր կարմիր լայն ճակատին սառած,
Մարել էին ասես հույսերը թևավոր,
Որոնք թռչում էին դեպ ազդիկը սիրած
Եվ շշնջում գալիք վարուհի լախտավոր:

.
.

Անդարձ իմ բարեկամ, ընկեր, իմ զինակից,
ես այտեղ եմ կրկին, մեր նոր Երևանում,
Դարձել ենք տուն արգեն անեղ այն փոթորկից,
Մեր անալարտ թողած մեծ շենքն է բարձրանում,
Որի համար տվել ես բոլբ քո արյունից
Եվ որի հետ դսւ ես հավերժ անմահանում:

Եվ այժմ, երբ ջահել, խարայաշ ուկրաինուհին
Անցնում է բալենու այդիների մոտով,—
Գտնում է քեզ այնտեղ իր մենության պահին,
Ծաղիկներին կարմիր գգվում է կարոտով,
Որոնց սիրել ես դու, փայփայել ես խորին
Եվ նոր կյանք ես տվել քո վաղամեռ սրտով:

194

Ի Ն Ձ Հ Ե Տ ԵՎ Ա Մ Ե Ն Ք Ի

(Զինվորի հուշատետրից)

1. Պ Ա Տ Գ Ա Մ

Հիշում եմ, աշնտեղ էր, խրամատում,
Դու ժպտացիր ինձ աշնպես բարի,
Որ այդ մի քաղցր ակնթարթում
Զգացի հուրը քո աչքերի:

Դու ասացիր ինձ՝ նա, ով մնա
Այս կովից հետո թե կենդանի,
Հաղթությամբ էր տուն վերադառնա,
Տեսնի գաշտերը մեր հայրենի...

Թող նա զինվորի կարոտն անհուն
Տանի սափորով զուլալ սրտի,
Հասնելով աշնտեղ՝ հայրենի տուն —
Հայտնի ընկերոջ, հարազատին:

Արդ ես դարձել եմ, զինվոր ընկեր,
Դարձել եմ, անդարձ իմ բարեկամ,
Նորից լսում եմ քաղցր երգեր
Օջախներում մեր հայրենական:

Եվ ես, որ հիմա երգ եմ գրում
Հիշելով պահը խրամատի,
Այդ քո կարոտն եմ հայտնում սիրով
Ընկերոջ, մորը, հարազատին:

Այս առուն, որ այսպես կարկաչում է,
 Ջարկվում է մամուռ քարափին,
 Թվում է՝ թե անվերջ նա կանչում է
 Պատանուն՝ մեծացած իր արին:

Այս առուն, որ այսպես վարարում է
 Վազում է ծագկունքում դաշտերի,
 Ա՛խ, այդպես նա կարծես որոնում է
 Այն ջահել, այն սևա զինվորին:

3. ԱՅՐՍ

Երբ կոփում էի իմ ուղին հրում,
 Եվ կրում էի զենքը զինվորի,
 Թախիծ ու կարոտ և հույսն աչքերում
 Ինձ այցի եկավ իմ մայրը բարի:

Եկավ, որ օրհնի ճամփան իր որդու,
 Կարոտ չմնա սիրտը մայրական,
 Սեղմեց իր կրծքին, ճակատս համբուրեց
 Շոյեց շորերը իմ զինվորական:

Մորս գրկի մեջ, նրա համբույրից,
 Հայրենի հողի բուրմունքն զգացի,
 Ասես նրա հետ աշխարհը հայոց
 Իր զինվոր որդուն եկել էր այցի:

4. ԱՐԵՎ, ԱՐԵՎ,

Դու սիրում էիր լուսաբացը
Եվ արեգակի շողն առաջին,
Երբ շեշտակի էր մեր հարվածը
Երբ թշնամին էր մեր առաջին...

Թողնում դիրքերը՝ պաշտված արդեն
Թողնում մեր հողը հայրենական,
Փախչում՝ հանց գիշերն արևի դեմ —
Այն ճամփով, որով մի օր եկավ:

Դու նայում էիր արեգակին
Իրկում շողերը՝ ջերմ, կենարար,
Շշնջում էիր կարոտագին,
Որ արևն անվերջ պայծառ մնար:

* * *

Իմ լավ բարեկամ, իմ զինակից,
Նորից արևն է տես բարձրանում,
Փռում շողերը բիւ երկնքից,
Որոնում է քեզ ու չի դառնում:

Եվ այժմ, ամեն մի առավոտ
Երբ արևին եմ տալիս բարև,
Ասես լսում եմ ձայնդ ծանոթ,
Որ կանչում է դեռ. — արև, արև:

Տ. Չ Ե Ռ Ք Ը

Երբ կովում մի պահ մենք դադար առանք
 Եվ մեր զենքերը մի պահ լռեցին,
 Սյն առվի ափին, քույր իմ զթառատ,
 Վերավսր սաքով քեզ հանդիպեցի:

Դու գեղ դրեցիր իմ արնոտ վերքին
 Եվ շշնջացիր՝ թե ահա շուտով,
 Հաղթությամբ դեպ տուն կգառնանք կրկին,
 Կանցնենք մեր զուլալ առլակի մոտով:

Եվ օրեր անցան, էլ քեզ չտեսա,
 Կովի գաշտերում չհանդիպեցի,
 Մինչև Բեալինի դռները հասա,
 Եվ հաղթանակի ձայնը լսեցի:

Սպիացել են իմ վերքերն արդեն
 Եվ կոփմն անեղ գարձիկ է մի հուշ,
 Մեր արնոտ հողին բացվել են վարդեր
 Լսում եմ սակայն քո ձայնը անուշ:

ԵՐԳ ՀԱՂԹՈՂ ՋԻՆՎՈՐԻ ՄԱՍԻՃ

Նա հաղթողի քայլով անցավ հպարտորեն
Բրանդենբուրգյան այն գորշ դարպասներից,
Որոնք բացվել էին մեր դնդերի առաջ
Բայց ոչ իրենց կամքով, այլ մեր գրոհներից,
Մենք, որ ազատության դրոշները առած
Անցանք ստեպներով ու լեռներից:

Ահա և Ռեյխստագը,
Այս այն շինքն է «հպարտ», որի աշտարակին
Բուռի նման մռայլ և հայացքով վայրագ
Սվաստիկան ձեռքին կանգնել էր նա մի օր
Այն մարդատյաց լպիրշ գերմանացին,
Որպես խորհրդանիշ մահվան, չարագուշակ
Պատերազմի,

Արյան,

Կոտորածի

Նա հայում է շուրջը, այդ կիսավեր
Այդ գորշ, անհրապույր մերկ սյուների վրա
Կարգում է իրեն մոտ շատ անուշներ
Սովետական բազմազգ զինվորների:
Լցվում է հպարտությամբ սիրտը նրա
Խիզախությամբ իր քաջ ընկերների:

Նա մեկնում է սվինը և նրա սուր ծայրով
Այդ սյուներից մեկին իր անունն է գրում.
«Կռվով հասել այստեղ, հաղթել եմ թշնամուն,
Բեռլինն եմ նվաճել արյան դնով,
Ես հաղթության հզոր համազարկը տվի
Երկուսին մայիսի

Հազար ինն հարյուր քառասուն հինգ թվի»:

1945

ԱՐԱԳԻԼՆԵՐԸ

Ամեն տարի, դարունքին, երբ դաշտերն են սևանում,
Հեռվից դառնում եք նորեն գիրկը հայոց աշխարհի,
Գալիս, իջնում եք կրկին և ձեր հին բույնն եք դնում
Օշականի հինավուրց բարդու բարձր կատարին:

Բանի՛-քանի՛ դարուններ եկան-անցան ձեր թևով,
Եղբայրներից մեր պանդուխտ ողջույն ու սեր բերեցիք,
Նրանք եկած ձեր ճամփին լուռ նայեցին կարոտով,
Մինչև աշնանը կրկին նորեն դարձաք, գնացիք:

Ա՛խ, նրանք էլ ձեզ նման իրենց օջախն են տենչում,
Սեպ լեռները զմբուխտյա, աղբյուրները հայրենի,
Հայացքները՝ ձեր թևին, միշտ դեպի տուն են կանչում,
Կարոտ՝ խոսքին հարազատ, քաղցր լեզվին մայրենի:

Բայց այս գարնանը նրանք ահա գալիս են ձեզ հետ,
Դեպի գիրկը հայրենյաց՝ օտարության դռներից,
Շուտով դուք էլ սրտաբուխ նրանց երգը կլսեք,
Օշականի հինավուրց բարդու բարձր կատարից:

1946

ԳԱՇՏԵՐԻ ԵՐԳԸ

1. ՀԵՐՈՍՈՒՂԻՆ

Ամեն առաւիտա, երբ շողն արևի
Նոր էր ծաղկաւառ լեռներին ժպտում,
Նա դաշտ էր գնում, գործում կորովի
Փռւած ցոլցլան ցորենի արտում:

Վաստակն իր արդար թափած քրտինքի
Գտնում էր, տեսնում ամեն հասկի մեջ,
Այնտեղ գարունն էր տեսնում իր կյանքի—
Երջանիկ սիրտ կրակներն անշեջ:

Նա աշխատում էր, որ ամեն հատիկ
Մայր հողի գրկում աճի, զորանա,
Բերքն առատ լինի և տասնապատիկ
Կոլխոզը ծաղկի և հզորանա:

Եվ ի՞նչ իմանար դուստրը դաշտերի,
Որ արտերի մեջ իր հայրենական,
Ուժով դեռ դալար իր բազուկների
Գործ է կատարում մեծ, հերոսական:

Բայց հայրենիքը մոր պես գթառատ
Նրան իր սիրտ գանձերը տվեց,
Սեղմեց իր կրծքին, համբուրեց առատ,
Անմահ հերոսի կոչում պարգևեց:

2. ԿՈՄԲԱՅՆԱՎԱՐԸ

Երեկ նա այնտեղ էր իր տանկը վարում,
Քանդում թշնամու ամբությունները,
Այսօր գործում է հասուն արտերում
Հերոս, անվանի կոմբայնավարը:

Երեկ նա կռվում էր հանուն մեծ կյանքի,
Որ պայծառ լինի իր վաղվա օրը,
Այսօր հնձում է արտը ծով բերքի,
Հերոս, անվանի կոմբայնավարը:

Թեպետ լռել են հրանոթներն արդեն,
Բայց չի ավարտվել դեռ այս պայքարը,
Բերքով է կռվում իր թշնամու դեմ
Հերոս, անվանի կոմբայնավարը:

3. ԼԱՍԿԸ

Սերմնացանը մի հատիկ գցեց հողի մեջ
Եվ ջուր տվեց քնքշազին՝ ինչպես իր ուրդուն,
Արեգակը պարգևեց սրտի հուրն անշեջ,
Երկլինքը բյուր աչքերով լուռ նայեց արթուն:

Այսօր նա հասկ է հուռթի, ցորեն ոսկեշող,
Մի հատիկ էր, բայց քանի՞ կյանք բերեց իր հետ:
Ով սիրում է հայրենիք, ով սիրում է հող
Նրա աղբյուրը կյանքում դառնալու է գետ:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԱՅՅԸ

Եկալ խորունկ ու խոհուն, եկալ մեր մեծ գյումրեցին,
Նայեց Մասսի կատարին, սրտում՝ սիրո ծով կարոտ,
Գարնան շնչից նոր բացված ծաղիկները ժպտացին
Եվ երեկոն մեզ թվաց ծիրանավառ առավոտ:

Նա լուռ նայեց պալատի մարմարակերտ քարերին,
Հայացքի մեջ երազկոտ՝ զրնդացող քարավան,
Որ գալիս էր դարերից, աչքը՝ մեր նոր աշխարհին,
Դեպի դարեր հեռավոր շարունակում իր ճամփան:

1943 Էջմիածին

ՀԵՐՈՍԵՆԵՐԸ ՄԱՅՐ ՀՈՂԻ

(Սոցիալիստական Աւստրալիայի հայ Հեռագրերին)

Դուք, մայր հողի քրտնաջան բաղձավաստակ հերոսներ,
Զրնդում է ցնծագին աշխատանքի երգը ձեր,
Համայնական հողերի աղտոներում բյուրավոր,
Բաղաքներում, գյուղերում ձեր համբավը թեւալոր
Անցնում է արդ տնից տուն, անցնում դաշտեր ու այգի,
Լցնում սրտեր բյուրավոր զողանջներով ձեր փառքի:

Դուք ձեր բազկի վաստակով ծով բարիքներ բերեցիք,
Բերրի հողից ցորյանի հսկա շեղջեր հանեցիք,
Որ դաշտերում հայրենի արևի պես ցուցլուսի,
Որպես ոսկին մայր հողի՝ ձեր քրտինքով վաստակած,
Որպես ուժի, անսպառ առատութեան մայր աղբյուր,
Որպես հույսի շատրվան, որպես սիրո ծով համբույր:

Դուք պտուղն եք վայելում ստեղծագործ քրտինքի,
Ծով դաշտերին կյանք տվող հերոսական ձեր կյանքի,
Ձեզ հետ ցնծում է այսօր մեր ժողովուրդը սրտանց,
Արիասիրտ իր սրտոց պատվով, փառքով պսակված
Կարոտներով ջերմ սիրո սեղմում է մեծ իր սրտին
Եվ վառ համբույր դրոշմում ձեր քրտնաթոր ճակատին:

ԵՐԲ ՄԱՆՈՒԿ ԷՒՆՔ

Սիրով՝ Գ. ՄԿՐՏՅԱՆԻՆ

Երբ մանուկ էինք անհոգ ու թեթև
Եվ խաղում զուլալ առվակի ափին,
Աշխարհն էր թվում հեքիաթ ոսկեթև՝
Բազմած մեր գյուղի բարձր քարափին:

Մեր անմեղ ոգին պատանեկական,
Քասախի վճիտ կոհակների պես,
Դեռ չէր բողբոջել սերը կուսական,
Աշխարհի բազում հոգսերին անտես:

Մենք լսում էինք վաղուց ջրերում
Եվ հասնում գետի աջն ափը կանաչ,
Ուր որ սոխակն էր քաղցր դալալում,
Ուր բացվում էին վարդեր ու կակաչ:

Մանկության անհոգ տարիներն անցան,
Եվ մեր դեմ կյանքի օվկյանը բացվեց,
Սրբեր շողացին, հողմեր բարձրացան,
Եվ ծոֆն ալեկոծ մեր կուրծքը ձեծեց:

Այժմ փոթորկոտ կյանքի օվկյանում,
Ուր ալիքները դնում են, գալիս,
Կուռ բազուկներով ջրերն ենք ձեղքում,
Որ հասնենք այնտեղ՝ ափը ցանկալի:

1944

ՄԻՐՈ ԱՂԲՅՈՒՐ

Այն խոր ձորում Սրագածի, ուր որ հավքերն են խոսում,
Մինչև այսօր ժայռերի ասկ մի կաթնաղբյուր է հոսում:

Երբ հալվում է ձյունը սարի, երբ լանջերն են կանաչում,
Պաղ աղբյուրը սիրահարոտ՝ վառ սրտերին է կանչում:

Աղբյուրն այդ ջինջ տեսել է բյուր մարդիկ՝ եկել՝ ու անցել
Մերուց վառված բյուր սրտերին միայն պաղ ջուր է դարձել:

Մեկը վշտի բռնը ուսին՝ ջուրն է խմել ինչպես կաթ,
Սրտում սիրո, արգար խոսքի, աղատության ճառագայթ:

Մյուսն ինչպես անկուշտ վիշապ, աղբյուրին է կոպել,
Ոճիրներով իր ծանրացած արնոտ ձեռքն է լվացել:

Անց է կացել այն վշտալի տարին ինչպես երազում,
Բայց խոր ձորում մինչև այսօր դեռ կաթ աղբյուրն է հոսում:

1940

Հ Ա Յ Ո Յ Փ Ա Ռ Ք Ը

Խ. ԱՐՈՎՅԱՆԻՆ

Փակված էին հայրենի օջախներում ամեն դուռ,
Երբ քո հանձարը շողաց աստղի նման լուսասփյուռ,
Երբ հարազատ հարկի տակ քո երգերը լսվեցին,
Երբ մանուկները հայոց անուշ զիրդ կարգացին:

Սիրտդ բաց էր հայրենի երկնքի պես կապուտակ,
Հայոց վիշաք դարավոր դեռ պատանի կրծքիդ տակ,
Ոտք գրեցիր դու Մասսյայ բարձր լեռան դադաթին
Ուր արժիֆը էլ չէր հասել նրա ձյունե, պաղ շուրթին:

Բայց զինեկեր դու արդյոք. երբ այն բարձունքը հասար,—
Ինքդ պիտի կանգնեիր Արարատին հավասար,
Որ պիտի գան սերունդներ երգեն փառքը քո անհաս,
Նրանց սրտում, նրանց հետ երիտասարդ միշտ մնաս:

Դու սուր եղար զինվորի, դու խոսք եղար հրեղեն,
Փողովուրդին ձոնելով պայծառ ոգիդ լուսեղեն,
Հայրենիքի վիշաք ծով դու վառվելով երգեցիր
Եվ բոցաշունչ երգերիդ կրակներով կիզվեցիր:

ՄԱՆՈՒԿ ՕՐԵՐԻՍ ՔԱՂՅՐ ԸՆԿԵՐՆԵՐ

Վ. ՄԱՐԳՈՒՆՈՒ

Մանուկ օրերիս քաղցր ընկերներ,
Ո՛ւր եք դուք հիմա, ինչո՞ւ չեք կանչում,
Մի՞թե լսել է ծանօթ երգը ձեր,
Մանկության առվակն էլ չի կարկաչում:

Ինչպե՞ս անխարդախ ժպտաք մանկան,
Ինչպե՞ս վարդերը բացվող մայիսին,
Անցան օրերս սլառանեկական,
Խորհեցի սիրո և կյանքի մասին:

Իմ անբիծ, գուլալ ողին անարատ
Հուր-հավերժական սերը երազեց,
Բարձրացա լեռան կատարը հպարտ,
Սրախ երգերի քնարը խոսեց:

Նստեցի կանաչ առվակի ափին,
Որ նրա քաղցր խոխոջը լսեմ,
Որ ինձ ողջունե գարունքի արփին,
Որ դարձան շնչով երգերս հյուսեմ:

Բայց կյանքի, մանվան մենամարտի մեջ
Երբ ես վիրավոր ընկա քարերին,
Շուրթերս՝ վառվող կրակներ անշեջ
Դեռ կանչում էին իմ ընկերներին:

Եվ երբ ես մի սրահ աչքս բացեցի,
Տեսա՝ խոր վերքիս գնդակն է հանում,
Նայեցի նրան և ճանաչեցի,—
Մանուկ-ընկերիս, որ լաց էր լինում:

ՏԵՍԻՔ

Վ. Ա. Հ Ա Ն Տ Ե Ր Յ Ա Ն Ի Ն

Ահա հենվել եմ լուռ պատուհանի գոգին,
Նայում եմ ամպերին, երկինքն է արտասվում,
Հասնում է ականջիս դողանջը քո երգի,
Անդորր մենության մեջ լոկ քո ձայնն է լսվում:

Երկիրըդ հայրենի, սարերըդ ծաղկալանջ
Մաղաղ նիրհում են լուռ, սակայն արթուն մտքով,
Բայց սուր ես դու, չկաս, երգիչ իմ հոգնատանջ,
Ո՞ւր դնացիր մենակ, աշնանային երգով:

* * *

Ես լուռ հենված էի պատուհանի գոգին,
Հանկարծ մի թեթև ձեռք դուռս կամաց բախեց,
Ես բացեցի սիրով ու նայեցի կրկին,
Նա ներս մտավ դանդաղ, ինձ հետ այսպես խոսեց.

— Հոգնել եմ բարեկամ, — նա շշջաց կամաց,
Թույլ տուր օթեանեմ այսօր քո տնակում,
Այստեղ ջե՛րմ է այնքան, դարձան բույրով լցված,
Այստեղ ոգիս իրեն կենդանի է գտում:

Ես նայեցի նրան, ուրախությամբ արբած,
Նա ճամփորդ էր հոգնած՝ կյանքի բեռը ուսին,
Ասես որոնում էր արևի շողն հանգած,
Ինչպես աշնան տերև, ինչպես դուռնատ լուսին:

— Ներս եկ, հոգնած ճամփորդ, — շշնջացի սիրով:
Կրակը վառեցի, որ չմրսի երբեք,
Բայց նա անէացավ խավար այդ գիշերով,
Ոգին իր աննկուհ ճամփորդը հոգնարեկ:

* * *

Դարձյալ հենված մենակ պատուհանի գոգին
Նայում եմ ամպերին, բայց արտասուք չկա,
Հեռվից լսում եմ դեռ զողանջները երգի,
Եվ դեռ թվում է ինձ, թե նա նորից կգա:

Սթափվեցի հանկարծ, երազներս անյան,
Ոչ երկինքն էր խավար, և ոչ ամպն էր լալիս:
Այդ լոկ մի երգիչ է՝ ամեն գիշեր անձայն
Իր նորաստեղծ երկրին սիրով այցի գալիս,
1940

ՀԱՆՃԱՐԵՂ ԳՈՒՍԱՆՆՔ

Շրջում էի զով սարերում
Գարնան մի ջինջ առավոտ,
Իմ ականջին մի երգ հառավ,—
Զարթնեց և՛ սե՛ր, և՛ կարոտ:

Ունկնդրեցի երկա՛ր, երկա՛ր
Քաղցր, մեղմիկ նվագին,
Մի ձե՛ր գուսան հեովից եկավ
Հին արխալուղը հագին:

Նրա երգի ղողանջներից
Կոկոն վարդեր բացվեցին,
Զմրուխտ հագած զով լանջերից
Պաղ աղբյուրներ բխեցին,

Հետ նայեցի և ինչ տեսա
Սիրո՞ հրգիչն էր լալիս,—
Դա ի՞ր ոսկյա տավիղն առած՝
Սայաթ-Նովան էր գալիս:

1940

ՍԵՎԱՆ

Պ Ե Յ Ձ Ա Ժ

Լողում է նավակը, ճոճվում է դանդաղ,
Լուսինը ելնում է, փարվում է ծովին,
Երկինքը անամպ է, աստղերը խողաղ,
Լեռները ներհում են գիշերվա հովին:
1940

ԼԵՐՄՈՆՏՈՎԻՆ

Հանճարների պանթեոնում արևի սկսւ վառ մնացիր,
Շողաց քնարդ հավերժող, անմահական բնո մնացիր,
Դեռ նորարաց սիրտդ հանգավ հայրենական հարկից հեռու,
Բայց երգելովըդ սրտարուխ երգիչների լյառ մնացիր:

1944

* * *

Ս - Ի Ա

Դ՛նւ ոսկյա աղունք իմ վառ երգերէ,
Դ՛նւ կյանք, երջանիկ իմ նոր օրերի,
Դ՛նւ անհուն, վսեմ երկինք կապուտակ,
Դ՛նւ հավերժավառ վայլը աստղերի:

1945

* * *

Ե՛կ, կրկին անգամ նայեմ, փայփայեմ,
Տնւր ինձ մի բաժակ քո ձեռքով գինի,
Խմեմ մինչ մրուր, կարոտս առնեմ,
Վերջինն ել թող քո կենացը լինի:
1944

*
*
*

Ս,յն ծառի տակ մենաւոր մի օր սերտս քեզ բացի
Միւր կախարչ, երկնային երազներով բախտաւոր,
Միւ, այն զիշեր ինձ քեզնով աշխարհի տերն զգացի
Ս,յն ծառի տակ մենաւոր:

1945

* * *

Անդին ընկերներ, կյանքի ընկերներ,
Որտեղ եք հիմա, որ գոտեմարտում,
Լսում եմ սակայն, կրկին երգը ձեր,
Ձեր վառ պատկերն է իմ պայծառ սրտում:

1942

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻՆ

Կուզեմ իմ երգերից միայն մի բառ մնա
Փորագրված սիրով ձեր սրբազան քարին,
Որ երբ էյանքս ապրած հեռավոր հուշ դառնա,
Իմ երգերը պատմեք գալիք սերունդներին:
1944

ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԱՐԻ ՎՐԱ

Ս - Ի Ե

Մեր սիրո ճամփան թող այսպես լինի,
Դեպ երջանկության կատար բարձրանա,
Եվ որպես հայոց անարատ զինի,
Որքան հին լինի, այնքան քաղցրանա:
1946

ՎԵՐԱԴԱՐՁ

Նա հայրենիք կրկին դարձավ
 Կովի հեռու դաշտերից,
 Հպարտ ոգով, բայց աչքերը
 Զրկված լույսի շողերից:

Ցուպը ձեռքին շրջեց մենակ,
 Փնտրեց իր լույս եղնիկին,
 Որին սիրո համբույր տվեց,
 Տվեց իր սիրտն ու հոգին:

Ասել էին նրան՝ թե քեզ
 Սիրուհիդ է մոռացել,
 Հույսը կտրած, մենակ, անդարձ
 Բեզ թողել է, հեռացել

Բայց չէր մարել հուրը անշեջ
 Հավերժական այն սիրո,
 Եվ շրջում էր, շրջում անվերջ
 Երազներսով, հույսերսով:

Անցավ նրանց դռան մոտով
 Սև ~ սև դիշերն աչքերին,
 Սիրտը լցվեց ծով կարոտով՝
 Վաղուց անցած օրերի:

Բայց երբ մտավ այդին կանաչ,
 Ուր սերն արեց առաջին,
 Ինչպես քաղցր առվի կարկաչ
 Մի ձայն հասավ ականջին:

Շոշափելով ծառերն ամեն,
Սիրտը դրած ավի մեջ,
Գնում էր նա և թվում էր,
Թե սիրո հուրն է անշեջ...

Լեզու արել ու կանչում է —
Տուն է կանչում իր յարին,
Աղբյուրի պես կարկաչում է
Սիրո խոսքը շուրթերին:

Հավերժական սիրո ուժից,
Տենչանքներով, հույսերով
Փակված աչքերը բացվեցին
Ու լցվեցին լույսերով:

Եվ նա սրտի զուլալ աչքով
Նայեց՝ այնտեղ, ծառի տակ
Նստել էր նա, իր սիրուհին,
Հայացքն անմեղ, անապակ:

Ու երգում էր՝ աչքը պահած
Հեռու, հեռու ճամփեքին,
Ասես փնտրում էր սերն անցած
Լուրթ անհունում երկնքի:

Հասավ տղան ու խենթի պես
Հալվեց նրա գրկի մեջ,
Եվ շուրթերով կարոտակեց
Ասաց սիրո խոսքն անշեջ:

— Հեռվից դարձնի, գիրկդ ընկա,
Արև շողաց իմ աչքում,
Նայի՛ր, նորից քեզ մոտ եկա,
Հավերժ քննն եմ, քո գրկում:

ԹԵՎԱՎՈՐ ՆԱՄԱԿՆԵՐ

Հ Ա Ն Դ Ի Պ ՈՒ Մ Ա Ռ Ա Ջ Ի Ն

Իմ աննման սիրուհի, իմ գեղեցիկ Սեփնար,
Ահա նամակս առաջին՝ թացված ցողով քո սիրո,
Այս հեռավոր ակերբից սիրտս սիրով ծրարած
Ուղարկում եմ, որ բանաս՝ ճամփադ լցվի լույսերով:

Վառ է սերդ իմ սրտում և նա միշտ վառ կլինի,
Քանի արյունն է եռում երակներում իմ ջահել,
Մեր սիրո պես գորեղ է զուլալ սերը հայրենի,
Նրա ուժն է այս հեռու սահմաններում ինձ պահել:

Ընդունեցին ինձ սիրով ինչպես եղբայր հարազատ,
Հյուսիսային զով քամին իմ ճակատը համբուրեց,
Հայրենական աշխարհի հողն ու ջուրը սրբազան
Հուր վառեցին իմ հոգում, նրանց սերը ինձ գերեց:

Եվ ես դարձա մի զինվոր ու զենքերս կապեցի,
Երդում ավի, որ լինեմ առաջավոր գերքերում,
Այս անտառները վարժամ մեր սարի պես սիրեցի,
Որոնց պատկերն եմ տեսել իմ մանկական դրքերում:

Իմ գեղեցիկ սիրուհի, ասես դու ես ամեն ժամ
Աչքերիս դեմ բարձրանում պահակակետ գնալիս,
Կարծես շրջում ենք կրկին մենք իրարից անբաժան
Եվ ծաղիկներն անթառամ ծով բուրմունք են շաղ տալիս:

Երբ իջնում է երեկոն կատարներին լեռների,
Եվ երբ անտառն է սուզվում գիշերային քնի մեջ,
Ես ունկնդրում եմ խաղաղ սոսափյունը ձառերի,
Հայրենիքի և քո ջերմ սերը սրտում իմ անշեջ:

Գիտեմ, սերս է թե առել քո կենսալից կրծքի տակ,
Պատմիր բոլորն ու գրիր քո հեռավոր սիրածին,
Եթե ուզես՝ իմ հոգու կրակները քեզ կտամ,
Եթե ուզես՝ կգառնամ հզորաթեւ մի արծիվ:

ՀԱՆԳԻՊՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ

Միրտս թրթռաց անխարդախ սիրով,
Երբ հեռվից եկած գիրդ կարգացի,
Արևն էր ժպտում ինձ բյուր շողերով,
Կրծքիս տակ քո ջերմ շունչը զգացի:

Ամեն տողի հետ, ամեն բառի հետ
Ժպտում էիր դու, անգին Սանասար,
Թվաց թե զարնան թռչունների հետ
Տուն դարձար մի պահ, եկար, ինձ հասար:

Աչքս քո ճամփին, հույսերս քեզ հետ,
Սերս քո սրտում, անունս շուրթիդ,
Ես հավատում եմ, որ դու կլինես
Մեծ հայրենիքի արժանի որդին:

Կյանքիս զարուհն է բացվել քեզանով,
Ինչպես ծաղկունքը մեր դով սարերի,
Ինչպես կարկաչուն, պաղ վտակներով
Զուլալ ջրերը մեր աղբյուրների:

Քո կյանքի համար կրակներ վառած,
Քեզնով եմ հպարտ ապրում ու շնչում,
Անսպալ սերս ջինջ աղբյուր գառած —
Դեպի քո սիրո գեան է կարկաչում:

ՀԱՆԳԻՊՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ

Իմ սևաչյա սիրունի, իմ լույս կյանքի բարեկամ,
Զգարմանաս, երբ կարդաս այս նամակը սիրով լի,
Քեզ ունկնդիր թող լինեն աղբյուրները մոտակա,
Եվ առվակները զուլալ, որ սարերիցն են զալիս:

Անտղերի փայլը մարեց, լուսաբացն էր մոտենում,
Միտքս թռավ դեպի քեզ, մեր սարերը հիշեցի,
Հայրենիքի և քո վառ սերն էր խոսում իմ սրտում,
Երբ այդ քաղցր վայրկյանին կրակոցնեք լավեցին:

Սավառնակներ թշնամու հրեացին երկնքում,
Եվ ոռնոցով ամենի վերից կրակ թափեցին,
Կյանքի, մահվան ու պատվի թեժ կոհիլը էր բորբոքվում,
Եվ դեպի վեր մեր հզոր արծիվները սուրացին:

Այդպես մտավ թշնամին Հայրենական հողը մեր,
Որ մեր կյանքի լուսաշող բորբ արևները մարի,
Որ մեր այսօրը դառնա կրկին մոռյալ մի գիշեր,
Որ մենք ստրուկը լինենք արյունատենչ՝ իր սրի:

Էիճը ծփաց, ալիքվեց, դայրացել էր ջուրն անգամ,
Ասես բարձունքն էր ուզում փլվել գլխին թշնամու,
Անտառները ձայն տվին՝ թե դադանները եկան,
— Հե՛յ, աղբյուրներ փակվեցեք, օձն է ձեզնից ջուր խմում:

Եվ մենք կովի նետվեցինք՝ դարձած մի կամք, մի ոգի,
Հանուն փառքի հայրենյաց, հանուն վսեմ մեր սիրո,
Մենք չենք թողնի, օ՛հ, երբեք, որ թշնամին անարգի
Օջախները սրբադան ու մեր սրտերը սիրող:

Այս նամակը, որ հիմա քեզ է գալիս, Սեփնար,
Խրամատից եմ գրում, սիրտս ամեն տողի մեջ,
Մահը ի՞նչ է իմ աչքին, երբ կովում եմ քեզ համար,
Երբ հայրենի օջախի հուրն եմ պահում ես անշեջ:

Գիտեմ, աչքդ չի մնա առանց արցունք իմ ճամփին,
Բայց մի լինի դու երկչոտ, դեռ կբացվի վառ գարուն,
Դու հավատա, որ կովում մենք կհաղթենք ոտխլին,
Ինչպես սիրտդ դեռ կոկոն հավատում է իմ սիրուն:

Ինձ պես կովում են այստեղ ընկերներս բոց սրտով,
Վրիժառու, հայրենյաց սուր սրերը ձեռքներին,
Ձե՞ որ նրանց էլ նույնպես սպասում են կարոտով,
Իրենց կույսերը ջահել՝ սիրո խոսքը շուրթերին:

Մի վհատվիր, ես կգնմ, կգնմ գիրկդ անարատ,
Երբ թշնամին գլխատվի և հաղթանակը բերենք,
Երբ դեպի տուն հայրենի դառնանք հաղթող ու հպարտ,
Եվ անխարդախ մեր սիրո պտուղները վայելենք:

Հ Ա Ն Դ Ի Պ Ո Ւ Մ Զ Ո Ր Ր Ո Ր Դ

Ա՛խ, իմ Սանասար, քո սերն է որ միշտ
Կարոտած աչքիս արցունքն է մարում,
Քանի շնչում ես, չունեմ ոչ մի վիշտ,
Քեզնով եմ ապրում այս մեծ աշխարհում:

Երբ մենք իմացանք դեպքերը բոլոր
Վրեժի, ցասման ալիք բարձրացավ,
Զունեի հանգիստ ժամեր ոչ մի օր,
Մինչև որ քեզնից նամակ ստացա:

Նամակ ստացա՝ հարազատ, ծանոթ,
Կովից տուն եկած գիրդ կարդացի,
Թվաց թե մի պահ կանգնեի ես ինձ մոտ
Եվ ինչ երջանիկ ժամեր ապրեցի:

Կարդացի բոլոր իմ ընկերներին
Նամակդ՝ կովի դաշտերից եկած,
Քո կարոտն էի հայտնում աշխարհին՝
Սրտիս սիրատենչ դարպասները բաց:

Ես ուզում էի այդ քաղցր ժամին
Մի ոգի դարձած ամենքն ինձ լսեն,
Անգամ հովերը անտես, անմարմին
Քո հերոսական գործերից խոսեն:

Իմ քաջ Սանասար, այստեղ, թիկունքում
Կազմում են ահա զինավառ խմբեր,
Գալիս են նրանք, որ ձեզ հետ մեկտեղ
Խոցեն թշնամու սիրտը մահաբեր:

Մայրն ուղարկում է որդուն հարազատ,
Քույրը եղբորն է ճանապարհ դցում,
Բաժանման պահին շուրթին զինվորի
Համբույր է թողնում ջահել հարսնացուն:

Նրանց ճամփան հն օրհնում ամեն օր
Ծերունիները երկու կյանք ապրած,
Եվ զավակներին այդ անեղ կովից
Ցանկանում ուրախ, բարի վերադարձ:

Եվ դու գրում ես. որ քեզ սպասեմ,
Բայց ինչպե՞ս սիրտս բոլորը տանի,
Ա՛խ, ինչպես հանգիստ ամեն խոսք լսեմ,
Երբ փոթորկվում է հողը հայրենի:

Ես կզամ քեզ մոտ, պատասխան տուր ինձ,
Թող ծարավ շուրթս շուրթերիդ հպեմ,
Թե որ չկավեմ զինվորի նման,
Զինվորի արնոտ վերքը կկապեմ:

Հ Ա Ն Գ Ի Պ Ո Ւ Մ Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ

Սիրտս կարգաց միտքը քո, սիրո երգը կարկաչեց,
Քո պատկերը, Սևինար, ասես կանգնեց իմ դիմաց,
Մի պահ սարը մեր զմրուխտ, մեր աղբյուրը ինձ կանչեց,
Որը վառվող քո սիրուն շուր է տալիս ե՛ր հիմա:

Երբ գիշերն է ծանրանում ու չի վառվում ոչ մի լույս,
Երբ անդորր է, լուսթյուն առաջավոր դիրքերում,
Քեզ եմ հիշում այն ժամին, երբ միասին ելանք գուրս,—
Նորաբողբոջ, լույս սիրո հուրը մեր վառ աչքերում:

Կանաչ գորգին հաց զրիլ, համբույր ավիր ջերմ սիրտ
Եվ ասացիր՝ երբ հեռու սահմաններում կլինես,
Թող քո ճամփան վառ լինի հավերժաշող լույսերով,
Սևինարի նման ջերմ հայրենիքդ էլ կսիրես:

Եվ ես այստեղ, կովի մեջ քո պատվերն հմ կատարում,
Ինչպես վայել է ամեն սովեստական զինվորի,
Խիզախելով կովի մեջ ավելի եմ քեզ սիրում,
Քեզ սիրելով ուժգին է դառնում հարվածն իմ սրի:

Դու ուզում ես զալ ինձ մոտ, սիրող լավ եմ հասկանում,
Բայց ո՛չ, անգին Սևինար, դու թիկունքում պիտ մնաս,
Մի բազուկս ամեն օր քո փոխարեն է կովում,
Որ երջանիկ մեր սիրո պտուղները ստանաս:

Սևինարը տուն մտավ միտքը սիրած տղի հետ,
Երկար նայեց թխադեմ Սանասարի նկարին,
Նա մի ծաղիկ էր պայծառ՝ չթառամող առհավետ,
Բուսած այն սեզ սարերի ծաղկածիծաղ լանջերին:

Բայց օրերը անցնում են, նամակ չկա նրանից,
Արդյոք ի՞նչ է պատահել, ինչո՞ւ այսպես ուշացավ,
Մի՞թե կյանքիս շունչ տվող սերը վանել է սրտից,
Մի՞թե կռվում այս անեղ մի ծանր վերք ստացավ:

Ու մտածում էր մենակ՝ անքը պահած ճամփեքին,
Թե ինչ լուրեր են շրջում, ո՞վ է կռից դարձել տուն,
Թե ո՞ր սիրած աղջիկն է գտել արևն իր կյանքի,
Թե ո՞ր մայրն է կարոտով կրկին փարվում իր որդուն:

Այդպես խորհում էր երկար, երբ դուռն հանկարծ բխեցին
Սևինարին հանձնեցին նամակ ու թերթ լրագրեր,
Ասես նրա թարմ կրճքին սառն աղբյուրներ բխեցին:
Երբ որ ծրարը բացեց կարոտանքով անհամբեր:

Ի՞նչ իմանար փոստատար ժիր պատանին այն մասին,
Որ հանձնում է աղջկան երկու կրակ մի ձեռքով,
Որ մեկը մահն է գուժում կռվում ընկած հերոսի,
Մեկը պատմում է սիրո երազները ջերմ խոսքով:

Սևինարը կարդում էր, կարդում խորին մի սիրով
Այն տողերը, որոնց նա շատ երկար էր սպասել,
Որոնք սիրտը իր ջահել լցնում էին հույսերով,
Որոնց համար նա այնքան քաղցր երգեր էր հյուսել:

Կարգաց այդպես նա կրկին և երբ նամակն ավարտեց,
Հպեց վառվող շուրթերին, որպես համբույր սիրածի,
Ապա հենց նոր ստացված այն լրագիրը բացեց,—
Մտքում քաղցր խորհելով իր ապագա մեծ գործից:

Նայեց... և ի՞նչ, իր դեմքին տռավ մի սև շրջանակ,
Ու հարազատ մի պատկեր, ինչպես թոշնած մի ծաղիկ,
Ասես գետինը փլվեց Սևինարի ոտքի տակ,
Ասես հասավ ականջին մահվան շուրջն այն տղի:

Ու էլ ոչինչ նա չզգաց: Իսկ երբ ուշքի բերեցին,
Հեկեկում էր մանկան պես, դառն արտասուք էր թափում,
Կանչում էր.— Իմ Սանասար, անխ, քեզ ինչպես խփեցին,
Լրագիրը ինձ տվեք, գուցե աչքերս են խաբում:

Ու նայում էր նա երկար Սանասարի նկարին,
Ասես մի պահ նա պիտի սիրո խոսքեր շննջար,
Կամ հոգեզուկ հրեղին՝ սև մազերը ճակատին
Կուլի դաշտից հողմաթև հաղթանակով պիտի դար:

*
*
*

Առավոտյան խոր վշտից Սևինարը արթնացավ,
Սանասարի պատկերը աչքերի մեջ սգավոր,
Մի պահ այտերը թրջող արցունքները չքացան,
Երբ իր նամակը գրեց ընկերներին հետավոր:

Վ Ե Ր Ջ Ի Ն Է Ա Ն Գ Ի Պ Ո Ւ Մ

Իմ քնջ, իմ լնով եղբայրներ, լսեք, ձեր քույրն է խոսում,
Գիտեմ, գուք էլ ինձ նման վիշտ եք ապրում մի խորին.
Միայն ջահել այն տղան Սևինարին չի լսում,
Որ տարավ սերս իր սրտում ու համբույրս շուրթերին:

Միակ խնդիրս է ձեզնից՝ ջահել հասակը նրա
Պահեք այնտեղ, ուր ընկավ ինչպես հզոր մի արծիվ,
Գերեզմանին գրեցեք՝ տվեց կյանքը իր մատաղ
Իր սիրուհուց թանկագին հայրենիքի մեծ գործին:

Թող նա քնի միշտ հանգիստ հայրենիքի ջերմ գրկում,
Նրա քունը շանթն անգամ էլ չի կարող խանգարել,
Սևինարը կանգնած է թշնամու դեմ, ձեր շարքում
Եվ պատրաստ է իր կտրիճ հերոսի սուրը կրել:

Գերեզմանին քար գրեք, վրան պատկեր քանդակած,
Այնտեղ գրեք մարտական հաղթանակի երզը ձեր,
Սանասարի սիրունին իր հրեղեն սուրն առած
Ահա ձեզ մոտ է դալիս, իմ վնու, անգին եղբայրներ:

ԴԵՊԻ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ՀԻՇՍԱԿԻՆ

Վերջին անգամ սիրով զավակներին նայեց,
Որոնք ննջում էին անուշ երազներով,
Ճակատներին թափված գանգուրները շոյեց
Եվ հին զրքեր թերթեց դունատ իր մատներով:

Ննջում էր էմիլիան՝ հողնությունը դեմքին,
Եվ զարկում էր սիրտը խաղաղ ու համաչափ,
Ասես խոսքը սիրո սառել էր շրթունքին,—
Այն հարազատ ոգու կարոտներով անափ:

Իսկ նա ամբողջ գիշեր անքուն և մտադրազ
Դեպի դուրս էր նայում փոքրիկ պատուհանից,
Ուր իշխում էր միայն խավաբի շունչը պաղ,
Մահվան ոգին՝ ասես ելած գերեզմանից:

Նա թերթում էր զրքեր կրկին, կրկին անգամ,
Ասես պատասխանն էր փնտրում մի մեծ հարցի,
Եվ խոհերով խորին, սիրով նվիրական
Որոնում էր կյանքի՝ նավակը հողմացիլը,

Որով փոթորկահույզ օվկյաններ է անցել,
Եվ ճեղքել է հուժկու ալիքները մի օր,
Մակայն հեռվից կրկին իր տուն վերադարձել,—
Իր մայր ժողովրդին, որ սիրտը սպավոր...

Ծունկ էր իջնում լռին բռնակալին օտար,
Ծով քրտինք էր թափում հողի ու քարի հետ:
Հայոց լեռնաշխարհում ազատ արև չկար,
Սև ամպն էր պարուրել սարերը ծաղկավետ:

Հյուժւած, անօգնական երկիրն էր ավերվում,
Վանքը կաշկանդում էր լեզուն ժողովրդի,
Հայրենական հարկի օջախն էին մարում,
Խլում էին նրա արյունակից որդին:

Նա տենչում էր անվերջ, որ հայ մանուկն ազատ
Եվ անկաշկանդ խոսի լեզվով իր մայրենի,
Սիրի անմար սիրով երկիրն իր հարազատ,
Նրա անդավաճան, անլախ որդին լինի:

Սակայն դժնատեսիլ ուրվականի նման
Առած հալածանքի նետերը թունաւոր —
Բամբասանքի սրով խոցում էին նրան
Մարդիկ հայրենագավ և սև ֆարաշավոր:

Նա միայնակ այդպես շրջում էր հալածված,
Վառ դարունն էր տենչում հայոց ժողովրդի,
Շուրջը չարագուշակ ամպերը ծանրացած,
Իր մայր հայրենիքի խորին վերքը սրտին:

Եվ ուռչում էր սիրաբլ օվկյան իր վշտերից,
Մանրանում էր գլուխը, աչքերը խոնարհում,
Մտածում էր՝ գնալ, կորչել չար աշխարհից...
Բայց էմիլիան հանկարծ ձեռքերն էր երկարում...

Եվ իր անըջական, անհոգ երազի մեջ
Նա կանչում էր. «Բնիբ, քնիբ, իմ Քաչատուբ,
Բավ է գրքեր կարդառ ու արտասովես անվերջ,
Զավակներիդ քո վառ, սիրո համբուլքը տուր»:

Հանկարծ մեխվեց տեղում, ծնկները ծավեցին,
Մտքերն օվկիանոսի ալիքների նման,
Որոտաձայն, ուժգին իրար խռնվեցին,—
Ջրերի մեջ թողած և մահ, և գերեզման:

Նա գլուխն իր առավ դողդոջ ափերի մեջ,
Ու մտածեց՝ մարդուն հավատարիմ մնալ,
Սերը հայրենական պահել վառ ու անշեջ,
Ինչո՞ւ թողնել որդուն, ամայություն գնալ:

Քայց փախչում էր սիրտը, խոցված ու հալածված,
Ոգին թևեր առել ու թռչում էր հեռու,
Նրա գունատ դեմքին հոգնութունով լցված
Աշխարհն էր մթագնած իր աչքերը հառում:

Նա շնչաց հազիվ,— հոգիս արդեն մաշվեց,
Ազատության արև դեպի քեզ եմ գալիս,
Ապա հմիլիայի մահճակալին թեքվեց,
Ծամերը մեզմ շոյեց և սիրտն էր լուռ լալիս:

* * *

Դուսարաց էր արդեն, երբ դուրս եկավ մուրը,
Եվ դաշտն Արարատյան մի հայացքով չափեց,
Նրա հոգին խոցված և սիրտը վերավոր
Պոռթկաց մեկեն, քունքին տաք արյունը խփեց:

Նա գնում էր մենակ, հոգնած և հուսահատ,
Նրա ծով վշտերից բնությունն էր լալիս,
Ամայության գրկում լսում էր անընդհատ
Այն ձայնը հարազատ, որ հեռվից էր գալիս:

Նա գնում էր անկանգ, նայում էր ամպերին,
Որ իր օվկյան ոգին երկնքի դեմ բանա,
Հոգնած իր գլուխը դնի ժեռ քարերին,
Երազներով անուշ ննջի և քնանա:

Նրան ողջունում էր կատարն Արարատի,
Միակ մտերիմը այն լուսարեր ողու,
Շշնջում էր կարծես երգումը Պարբոտի.—
Տրված մեծ վերելքի ժամին այն ահարկու:

Ապա նայեց հեռուն, անցյալը երազեց,
Հիշեց ուլքեր էին իր սիրտը գուրգուրում,
Ուղեց գրկել մի պահ, և ձեռքերը պարզեց ...
Ամայությունն էր լոկ նրան դիմավորում:

Ծունկի իջավ մռայլ ափին մայր Արաքսի,
Նրա գուլալ ջրից մի բուռ առավ, խմեց,
Թվաց՝ դարեր անվերջ այդպես նա կհոսի —
Ալիքներում պահած իր վիշտը հոգմածեծ:

ԹՎաց նրան, թե դա, այդ ջուրը հորդարուի
Գալիս է գյուղերից՝ մահվան մեզով պատած,
Հողի մշակներն արցունքն է սրտարուի,
Որ գնում էր մոռյլ ուզիներով անդարձ:

Նրա սիրտը լցվեց, և աչքերից երկու
Արտասուքի կաթիլ լսանոնց այդ ջրերին,
Որ իր ոգին պահեն անմահության գրկում,
Եվ սերը շնչան դալիք սերունդներին:

Խոհերից ծանրացած իր գլուխը դրեց
Հողմի թևով ընկած մի ապառաժ քարի,
Երազներով լեցուն մայր հողը համբուրեց,
Եվ լսադադ քունն իջավ հողնած իր աչքերին:

* * *

Քնեց երկնք, երկնք: Արաքսն աղմկալից
Օրորում էր նրան, ինչպես մայրը՝ որդուն,
Փրփրում էր ջուրը, կնում էր ավերից,
Հեռվից մի անուշ ձայն կանչում էր՝ դեպի ասն:

Նա չզարթնեց երբեք ու չժպտաց կրկին,
Քաղցր երազներով հավերժ անէացավ,
Դատարկութունն ամբողջ իսկեց նրա ոգին,
Իմաստությամբ խորին լցվեց ու հադեցավ:

1941

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԲՈՅՆԲՈՎ

Իմ երգի աղուհք	3
Հաղթանակի ոգին	4
Դյուցազունների երգումը	6
Մերն է Սեաստողլը	8
1913 թ., օգոստոսի 5	5
Կարոտ	11
Այդ մենք ենք դալիս	12
Մեր սովետական դեմերալները	14
Նամակ	15
Կարոտի երգ	17
Անխորտակ ամբոցը	18
Այսօր նորից	20
Զինվորի նամակը	21
Աշտարակ	22
Երգ Կարմիր Բանակին	24
Հաղթանակից հետո	25

ՀԱՂԹԱՆԱԿԻՑ ՀԵՏՈ

Մեծ Ստալինին	26
Իմ մայր Հայրենիք	28
Յար ջան, դարձել ես	29
Մենք հալատում էինք	30
Թափած արյունը իմ ընկերների	31
Աշտարակի չինարին	32
Եղբայրություն	33
Մեր սերունդը	36
Մոսկվայի ձայնը	38
Այս իմ երևանն է	39
Մայր	41
Նա	42

ԻՆՉ ՀԵՏ ԵՎ ԱՄԵՆՔԻ


Ինձ հետ և ամենքի	45
Երգ Հաղթող զինվորի մասին	49
Արագիլները	50

Դաշտերի երգը	51
Հերոսները մայր հողի	54
Երբ մանուկ էինք	55
Սիրո աղբյուր	56
Հայոց փառքը	57
Մանուկ օրերին քաղցր ընկերներ	58
Տեսիլք	59
Հանձարեզ գուսանը	61
Սեան	62
Լերմոնտովին	63
Դու ոսկյա ակունք	64
Եկ, կրկին անգամ	65
Այն ծառի տակ	66
Անգին ընկերներ	67
Հայրենի հուշարձաններին	68
Մակաբրուբյուն նկարի վրա	69
ՊՈՆՄՆԵՐ, ԲԱՎԱԳՆԵՐ	
Վերադարձ	70
Թեափոր նամակներ	72
Գեպի անմահություն	79

Պատ. խմբագիր՝ ՍԱՐՄՆԵ
 Տեխ. խմբագիր՝ Ս. ԼԱԹՈՅԱՆ
 Սրբագրիչ՝ Հ. ՄԱՆՎԵԼՅԱՆ
 Կոմսրոյ սրբագրիչ՝ Հ. ԴՈՂՈՒՆՅԱՆ

ՎՖ 04807 Պատվեր, 323 տիրած 8000,
 Հեղին. 2,5 մամուլ, տպ. 51/2 մամ.
 Հանձնված է արտ 25/VIII 1948 թ.:
 Ստորագրվ. է տպ. 5/X 1948 թ.:

ՀՍՍՌ Մինիստրների Սովետին
 կից Պոլիգր. և Հրատպարչ.
 № 3 տնտեսության Առկեր-
 դյան, № 65, Երևան, 1948 թ.



ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պեստ է լինի
17	3 ն	Լեիզախ	Լեիզախ
39	9 ն.	Կյանքի աղբյուր	Ուրպես կյանքի աղբյուր
58	2 վ. Վ.	Մարգուրու	Վ. Մարգուրուն

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220028013

ԳԻՆԸ 3 Ռ.

640

